

**ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՉԱՆԳԱՀԱՐԵԼ
1-888-873-1000 ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՈՎ:**

**Los Angeles-ի քաղաքապետարանը տրամադրում է քվեարկողի տեղեկատվությունն անգլերեն, ինչպես նաև հետևյալ լեզուներով՝
Այս բրոշյուրի հայերեն օրինակն ստանալու համար զանգահարեք 1-888-873-1000 հեռախոսահամարով:**

**要索取本手冊的中文版 ·
請致電 1-888-873-1000**

**برای تهیهی نسخه‌ای از این جزوه به زبان فارسی، با شماره تلفن
1-888-873-1000 تماس بگیرید**

**हिन्दी में इस पैम्फलेट की प्रति प्राप्त करने के लिए,
1-888-873-1000 पर फोन करें**

**このパンフレットの日本語版をご希望の方は、
1-888-873-1000までお電話ください。**

**ដើម្បីទទួលបានឯកសារថតចម្លងមួយច្បាប់ពីកូនសៀវភៅនេះជាភាសាខ្មែរ
សូមហៅទូរស័ព្ទលេខ 1-888-873-1000**

**이 팜플릿을 한국어로 원하시면 다음 전화번호로
연락하십시오. 1-888-873-1000**

**Для получения копии данной брошюры на русском
языке позвоните по номеру 1-888-873-1000.**

**Para obtener una copia de este folleto en español,
llame al 1-888-873-1000**

**Para makakuha ng kopya ng pamplet na ito sa Tagalog,
tumawag sa 1-888-873-1000**

**เพื่อขอสำเนาจลสารนี้ในภาษาไทย โปรดโทรศัพท์ติดต่อที่หมายเลข
1-888-873-1000**

**Muốn có một tập sách này bằng tiếng Việt, hãy gọi số
1-888-873-1000**

Բովանդակություն

	Էջ
Քվեաթերթիկի ամփոփում	3-5

Քվեաթերթիկում առաջադրված օրենսդրական Նախագիծ, պնդումներ և տեքստ

Առաջարկ CB	6
Առաջարկ TC	11
Առաջարկ TT	19

ՔՎԵԱԲԵՐԹԻԿԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Los Angeles վարչաշրջանի Գրանցող-Արձանագրություն պահող/վարչաշրջանի քարտուղարը հանդիսանում է Los Angeles քաղաքի քաղաքային ընտրությունների ադմինիստրատորը:

Այս գրքույկը պարունակում է միայն 2026 թվականի հունիսի 2-ին կայանալիք Նախնական առաջադրման ընտրությունների՝ քաղաքապետարանի քվեաթերթիկում առաջադրված օրենսդրական նախագծերը:

Ընտրությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար, ինչպես օրինակ քվեարկության կենտրոնների տեղակայումը, խնդրում ենք կապվել LA վարչաշրջանի հետ՝ (800) 815-2666 հեռախոսահամարով կամ այցելել www.lavote.gov կայքը:

Հաջորդ 3 էջերը պարունակում են Քաղաքի քվեաթերթիկում առաջադրված օրենսդրական նախագծերի պարզեցված տարբերակը: Յուրաքանչյուր օրենսդրական նախագծի լրիվ տեքստը, այլ տեղեկությունների հետ միասին, տպագրված է քվեաթերթիկի ամփոփումից հետո (տես՝ Բովանդակության էջը):

ՎԵՐՆԱԳԻՐԸ.

ԿԱՆԵՓԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՐԿԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ԶԲԱԴԿՈՂ ՉԼԻՑԵՆԶԱԿՈՐԿԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԱՐ:

ԽՆԴԻՐԸ.

Արդյո՞ք պետք է ընդունվի հրամանագիր՝ Los Angeles քաղաքում գործող կանեփի հետ կապված բիզնեսի հարկը նման գործունեությամբ զբաղվող չլիցենզավորված ձեռնարկությունների նկատմամբ կիրառելու նպատակով:

ԻՐԱՎԻՃԱԿԸ.

Los Angeles քաղաքը չի պահանջում կանեփի հետ կապված չլիցենզավորված ձեռնարկություններից վճարել բիզնեսի հարկեր, որոնք որոշվում են բիզնեսի համախառն եկամուտներով: Ներկայումս միայն կանեփի հետ կապված լիցենզավորված ձեռնարկություններն են պարտավոր վճարել բիզնեսի հարկը Los Angeles քաղաքին:

ԱՌԱՋԱՐԿ.

Այս նախագիծը կհաստատի մի հրամանագիր, որի համաձայն կանեփի հետ կապված չլիցենզավորված ձեռնարկությունների նկատմամբ կիրառվում է նույն համախառն եկամտի հարկը, որը ներկայումս կիրառվում է Los Angeles քաղաքում գործող՝ կանեփի հետ կապված լիցենզավորված ձեռնարկությունների նկատմամբ:

«ԱՅՈ» ԶՎԵԱՐԿԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է.

Դուք ցանկանում եք, որ ընդունվի հրամանագիր՝ Los Angeles քաղաքում կանեփի հետ կապված բիզնեսի համախառն եկամտի հարկը կանեփի հետ կապված չլիցենզավորված ձեռնարկությունների նկատմամբ կիրառելու համար, որը ներկայումս կիրառվում է կանեփի հետ կապված լիցենզավորված ձեռնարկությունների նկատմամբ:

«ՈՉ» ԶՎԵԱՐԿԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է.

Դուք չեք ցանկանում, որ ընդունվի հրամանագիր՝ Los Angeles քաղաքում կանեփի հետ կապված բիզնեսի համախառն եկամտի հարկը կանեփի հետ կապված չլիցենզավորված ձեռնարկությունների նկատմամբ կիրառելու համար, որը ներկայումս կիրառվում է կանեփի հետ կապված լիցենզավորված ձեռնարկությունների նկատմամբ:

ԱՅՍ ՕՐԵՆԱԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԱՍԲՈՂՋԱԿԱՆ ՏԵՋՍԱԸ ՍԿՎՈՒՄ Է ԷՋ 8-ԻՑ:

ՎԵՐԱՊԵՐՈՒՄ:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԱՌՅԱՆՑ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ:

ԽՆԴԻՐԸ:

Արդյո՞ք Los Angeles քաղաքը պետք է թարմացնի առցանց և այլ տուրիստական ընկերությունների համար ժամանակավոր բնակության հարկի (TOT) հավաքագրման և հաշվետվողականության պահանջները:

ԻՐԱՎԻՃԱԿԸ:

Ներկայումս հյուրանոցը գանձում և վճարում է TOT ընդհանուր վարձավճարի՝ ներառյալ բոլոր վճարները և սպասարկման վճարները, ցանկացած հյուրի համար, ով հյուրանոցի սենյակ կամ տարածք է զբաղեցնում 30 կամ ավելի քիչ օր: Առցանց և այլ տուրիստական ընկերությունները բանակցում են հյուրանոցների հետ սենյակների գեղչված կամ մեծածախ գների համար: Առցանց և այլ տուրիստական ընկերություններն այնուհետև գանձում են TOT՝ հիմնվելով բանակցված վարձակալության գնի վրա, այլ ոչ թե հյուրից գանձված ընդհանուր գումարի վրա՝ ներառյալ բոլոր վճարները և սպասարկման վճարները:

ԱՌԱՋԱՐԿԸ:

Այս օրենսդրական նախագիծը կպարտավորեցնի առցանց և այլ տուրիստական ընկերություններին հավաքագրել TOT՝ հիմնվելով հյուրանոցային սենյակ զբաղեցնելու համար հյուրանոցի հյուրերից գանձվող ընդհանուր գումարի վրա՝ ներառյալ բոլոր վճարները և ծառայությունների վճարները: Բացի այդ, նախագիծը թարմացնում է բոլոր հյուրանոցային օպերատորների, ինչպես նաև առցանց և այլ տուրիստական ընկերությունների համար հավաքագրման և հաշվետվողականության պահանջները:

«ԱՅՈ» ԶՎԵՆՐԿԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է:

Դուք ցանկանում եք, որ քաղաքը թարմացնի առցանց և այլ տուրիստական ընկերությունների համար TOT հավաքագրման և հաշվետվողականության պահանջները՝ դրանք ուղղելու քաղաքային ընդհանուր ծառայությունների տրամադրմանը:

«ՈՉ» ԶՎԵՆՐԿԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է:

Դուք չեք ցանկանում, որ քաղաքը թարմացնի առցանց և այլ տուրիստական ընկերությունների համար TOT հավաքագրման և հաշվետվողականության պահանջները՝ դրանք ուղղելու քաղաքային ընդհանուր ծառայությունների տրամադրմանը:

ԱՅՍ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԱՄԲՈՋԱԿԱՆ ՏԵՁՍԸ ՍԿՎՈՒՄ Է ԷՋ 14-ԻՑ:

ՎԵՐՆԱԳԻՐԸ.

ԶԱՂԱԶԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ:

ԽՆԴԻՐԸ.

Արդյո՞ք Los Angeles քաղաքը պետք է հյուրանոցի հյուրերի կողմից վճարվող ժամանակավոր բնակության հարկը (TOT) մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը 14 տոկոսից բարձրացնի մինչև 16 տոկոս, իսկ դրանից հետո՝ 15 տոկոս, և թարմացնի առցանց և այլ տուրիստական ընկերությունների համար TOT հավաքագրման և հաշվետվողականության պահանջները՝ այն ուղղելով քաղաքային ընդհանուր ծառայությունների ֆինանսավորմանը:

ԻՐԱՎԻՃԱԿԸ.

Ներկայումս TOT տոկոսադրույքը 14 տոկոս է՝ ներառյալ բոլոր վճարները և սպասարկման վճարները, ցանկացած հյուրի համար, ով հյուրանոցի սենյակ կամ տարածք է զբաղեցնում 30 կամ ավելի քիչ օր: Առցանց և այլ տուրիստական ընկերությունները բանակցում են հյուրանոցների հետ սենյակների գեղջված կամ մեծածախ գների համար: Առցանց և այլ տուրիստական ընկերություններն այնուհետև գանձում են TOT՝ հիմնվելով բանակցված վարձակալության գնի վրա, այլ ոչ թե հյուրից գանձված ընդհանուր գումարի վրա՝ ներառյալ բոլոր վճարները և սպասարկման վճարները:

ԱՌԱՅԱՐԿԸ.

Քաղաքային ընդհանուր ծառայությունները ֆինանսավորելու համար այս օրենսդրական Նախագիծը ժամանակավորապես կբարձրացնի TOT-ը 14 տոկոսից մինչև 16 տոկոս մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ դրանից հետո՝ 15 տոկոս: Բացի այդ, այս օրենսդրական Նախագիծը պարտավորեցնում է առցանց և այլ տուրիստական ընկերություններին հավաքագրել TOT՝ հիմնվելով հյուրանոցային սենյակ զբաղեցնելու համար հյուրերից գանձվող ընդհանուր գումարի վրա՝ ներառյալ բոլոր վճարները և ծառայությունների վճարները: Նախագիծը նաև թարմացնում է բոլոր հյուրանոցային օպերատորների, ինչպես նաև առցանց և այլ տուրիստական ընկերությունների համար հավաքագրման և հաշվետվողականության պահանջները:

«ԱՅՈ» ԶՎԵՄՐԿԵԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է.

Դուք ցանկանում եք, որ քաղաքը հյուրանոցի հյուրերի համար TOT-ը մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը 14 տոկոսից բարձրացնի մինչև 16 տոկոս, իսկ դրանից հետո՝ 15 տոկոս, և թարմացնի առցանց և այլ տուրիստական ընկերությունների համար TOT հավաքագրման և հաշվետվողականության պահանջները՝ այն ուղղելով քաղաքային ընդհանուր ծառայությունների ֆինանսավորմանը:

«ՈՉ» ԶՎԵՄՐԿԵԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է.

Դուք չեք ցանկանում, որ քաղաքը հյուրանոցի հյուրերի համար TOT-ը մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը 14 տոկոսից բարձրացնի մինչև 16 տոկոս, իսկ դրանից հետո՝ 15 տոկոս, և թարմացնի առցանց և այլ տուրիստական ընկերությունների համար TOT հավաքագրման և հաշվետվողականության պահանջները՝ այն ուղղելով քաղաքային ընդհանուր ծառայությունների ֆինանսավորմանը:

ԱՅՍ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԱՄԲՈՂՑԱԿԱՆ ՏԵՁՍԸ ՍԿՎՈՒՄ Է ԷՋ 24-ԻՑ:

Արդյո՞ք պետք է ընդունվի հրամանագիր կանեփի հետ կապված բիզնեսի գոյություն ունեցող քաղաքային հարկերը կանեփի հետ կապված գործունեությամբ զբաղվող չլիցենզավորված ձեռնարկությունների նկատմամբ կիրառելու մասին (10 տոկոս՝ կանեփի վաճառքի վրա, 5 տոկոս՝ բժշկական կանեփի վաճառքի վրա, 2 տոկոս՝ արտադրության, մշակման կամ այլ առևտրայնացման վրա, 1 տոկոս՝ տեղափոխման, փորձարկման կամ հետազոտության վրա), տարեկան մոտավորապես 30-35 միլիոն դոլար գներացնելով այնպիսի ընդհանուր քաղաքապետարանի ծառայությունների համար, ինչպիսիք են փողոցների/մայթերի վերանորոգումը, 911 արտակարգ իրավիճակներին արձագանքումը, հրդեհային պաշտպանությունը և այգիները՝ մինչև ընտրողների որոշմամբ չեղարկումը:

ԱՆԿՈՂՆԱԿԱԼ ԱՄՓՈՓՈՒՄ

SHARON M. TSO-Ի՝ ՕՐԵՆՆԱՂՎԱԿԱԼ ՀԱՐՑԵՐՈՎ ՂԵՆԱՎՈՐ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆԻ ԿՈՄԻՏԵ

2016 թվականին 64-րդ առաջարկի համաձայն նահանգում ռեկրեացիոն կանեփի օգտագործման օրինականացումից հետո Los Angeles-ի ընտրողները 2017 թվականին հաստատեցին M առաջարկը, որը Los Angeles քաղաքին լիազորություն էր տալիս կարգավորելու և հարկելու կանեփի հետ կապված տեղական բիզնեսները:

Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1-ին հոդվածի 21.51 և 21.52 բաժինները սահմանում են բիզնեսի հարկեր քաղաքում գործող կանեփի հետ կապված բոլոր լիցենզավորված բիզնեսների համար: Հարկի չափը որոշվում է բիզնեսի համախառն եկամտի հիման վրա:

Ներկայումս Los Angeles քաղաքի տեղական օրենսգիրքը կանեփի հետ կապված բիզնեսի հարկերը կիրառում է միայն կանեփի հետ կապված լիցենզավորված բիզնեսների վրա: Կանեփի հարկի դրույքաչափերը կազմում են կանեփի վաճառքից ստացված համախառն եկամուտների տասը տոկոսը, բժշկական կանեփի վաճառքից՝ հինգ տոկոսը, արտադրության, մշակման կամ այլ առևտրայնացման վրա՝ երկու տոկոսը և փոխադրման, փորձարկման կամ հետազոտության վրա՝ մեկ տոկոսը: Այս հարկերը չեն տարածվում կանեփի հետ կապված չլիցենզավորված բիզնեսի վրա:

Այս օրենսդրական նախագիծը կընդունի Los Angeles-ի տեղական օրենսգիրքը փոփոխելու որոշում Los Angeles քաղաքում կանեփի հետ կապված բիզնեսի հարկերը կանեփի հետ կապված չլիցենզավորված բիզնեսների նկատմամբ կիրառելու համար: Հետևաբար, կանեփի հետ կապված չլիցենզավորված բիզնեսները կենթարկվեն նույն համախառն եկամտի հարկերին, որոնք Los Angeles քաղաքը ներկայումս կիրառում է կանեփի հետ կապված լիցենզավորված բիզնեսների վրա: Կանեփի հարկերից ստացված եկամուտները կփոխանցվեն քաղաքի ընդհանուր հիմնադրամ և կօգտագործվեն քաղաքի ծառայությունների աջակցման համար:

Այս օրենսդրական նախագիծն ուժի մեջ կմտնի, եթե այն հաստատվի ընտրողների մեծամասնության կողմից:

ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MATTHEW W. SZABO-Ի՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԾՈՎ ԶԱՂԱՔԻ ՊԱՇՏՈՆՅԱ

Այս օրենսդրական նախագիծը կկիրառի քաղաքի գործող՝ կանեփի հետ կապված բիզնեսի հարկը նման գործունեությամբ զբաղվող չլիցենզավորված ձեռնարկությունների վրա՝ ներկայիս դրույքաչափերով. 10 տոկոս՝ կանեփի վաճառքի, 5 տոկոս՝ բժշկական կանեփի վաճառքի, 2 տոկոս՝ արտադրության կամ մշակման և 1 տոկոս՝ տեղափոխման կամ փորձարկման վրա: Ըստ գնահատականների՝ այս օրենսդրական նախագիծը քաղաքի համար տարեկան կապահովի մոտ 30 միլիոնից 35 միլիոն դոլարի եկամուտ: Եկամուտը կփոխանցվի Ընդհանուր հիմնադրամ և կօգտագործվի քաղաքային այնպիսի ընդհանուր ծառայությունների համար, ինչպիսիք են հրշեջ ծառայության և ոստիկանության արձագանքը, փողոցների և մայթերի վերանորոգումը, տրանսպորտը և այլ նպատակներով: Հարկային և կարգավորիչ օրենսդրության պահպանման ապահովման տարեկան վարչական ծախսերը գնահատվում են 2.2 միլիոնից մինչև 10.5 միլիոն դոլար: Իրական ծախսերը կախված կլինեն իրավակիրառական միջոցառումների տեսակից և չլիցենզավորված բիզնեսները փակելու կամ դրանք հարկային և կարգավորիչ օրենսդրությանը համապատասխանեցնելու համար անհրաժեշտ ջանքերի մակարդակից:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԻՆԱԳԾԻ ՏԵՔՍ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ _____

Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1-ին հոդվածի 21.51 և 21.52 բաժիններում փոփոխություններ կատարելու մասին հրամանագիր՝ կանեփի հետ կապված՝ քաղաքի գործող համախառն եկամտի հարկերը կանեփի չլիցենզավորված բիզնեսների վրա կիրառելու համար: (Տեղական օրենսգրքի լեզվի փոփոխությունները ներկայացված են ընդգծմամբ՝ ավելացված լեզվի համար և գծիկով՝ ջնջված լեզվի համար:)

ՔԱՆԻ ՈՐ բժշկական և ոչ բժշկական կանեփի մատով հանրությանը և սպառողներին պաշտպանելու, ինչպես նաև քաղաքի համայնքների վրա բացասական երկրորդային ազդեցությունը նվազեցնելու նպատակով քաղաքն ընդունեց կանեփի կարգավորման և կիրառման համապարփակ համակարգ, որը հաստատվեց Los Angeles քաղաքի ընտրողների կողմից 2017 թվականի մարտի 7-ին և ներառվեց Առաջարկ M-ում:

ՔԱՆԻ ՈՐ Առաջարկ M-ը նաև սահմանեց համախառն եկամուտների նոր հարկային ռեժիմ՝ տարբեր դրույքաչափերով, այն լիցենզավորված կանեփի բիզնեսների համար, որոնք զբաղվում են ոչ բժշկական և բժշկական կանեփի առևտրայնացմամբ՝ ներառյալ դրանց ածանցյալ արտադրանքն ու ծառայությունները:

ՔԱՆԻ ՈՐ Առաջարկ M-ն ընդունելու պահից լիցենզավորված, առևտրային կանեփի բիզնեսների հարկումը խթանել է չլիցենզավորված կանեփի բիզնեսներին գործել և զգալի առևտրային օգուտ ստանալ ռեկրեացիոն կանեփի օրինականացումից՝ առանց քաղաքի բոլոր գործարար հարկերը հավաքելու և վճարելու անհրաժեշտության, ինչպես ստիպված կլինեն անել լիցենզավորված կանեփի բիզնեսները, և

ՔԱՆԻ ՈՐ քաղաքը ցանկանում է ապահովել, որ չլիցենզավորված բիզնեսները ենթարկվեն նույն հարկին, ինչ լիցենզավորված ձեռնարկությունները, և սահմանել գործարար հարկերի հավասարություն կանեփի շուկայում:

ՀԵՏԵՎԱԲԱՐ

**LOS ANGELES ԶԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՂՐՈՒՄ Ե ՀԵՏԵՎՅԱԼԸ.**

Բաժին 1: Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1-ին հոդվածի 21.51 բաժնի (a) ենթաբաժնի (9) ենթակետը, որը վերաբերում է կանեփի բիզնեսների հարկմանը, փոփոխվում է հետևյալ կերպով.

9. «Փոխադրում» նշանակում է կանեփի և/կամ կանեփի արտադրանքի տեղափոխումը ~~լիցենզիա ունեցող~~ մեկ անձի գտնվելու վայրից ~~լիցենզիա ունեցող~~ մեկ այլ անձի գտնվելու վայր:

Բաժ. 2. Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1-ին հոդվածի 21.51 բաժնի (b) ենթաբաժինը, որը վերաբերում է կանեփի բիզնեսների հարկմանը, փոփոխվում է հետևյալ կերպով.

(b) Սույն բաժնի նպատակների համար գանձվող գործարար հարկը հետևյալն է.

1. ~~Լիցենզիա ունեցող~~ յուրաքանչյուր անձ, ով զբաղվում է կանեփի և/կամ կանեփի արտադրանքի վաճառքով, վճարում է \$100.00-ի չափով գործարար հարկ համախառն եկամտի յուրաքանչյուր \$1,000.00-ի կամ դրա մասի համար: Բժշկական կանեփի վաճառքը հարկվում է սույն հոդվածի 21.52 բաժնի համաձայն:

2. **Էլիցենզիա ունեցող** յուրաքանչյուր անձ, ով զբաղվում է կանեփի և/կամ կանեփի արտադրանքի փոխադրմամբ, վճարում է \$10.00-ի չափով գործարար հարկ համախառն եկամտի յուրաքանչյուր \$1,000.00-ի կամ դրա մասի համար:

3. **Էլիցենզիա ունեցող** յուրաքանչյուր անձ, ով զբաղվում է կանեփի և/կամ կանեփի արտադրանքի փորձարկմամբ, վճարում է \$10.00-ի չափով գործարար հարկ համախառն եկամտի յուրաքանչյուր \$1,000.00-ի կամ դրա մասի համար:

4. **Էլիցենզիա ունեցող** յուրաքանչյուր անձ, ով զբաղվում է կանեփի և/կամ կանեփի արտադրանքի ուսումնասիրմամբ, վճարում է \$10.00-ի չափով գործարար հարկ համախառն եկամտի յուրաքանչյուր \$1,000.00-ի կամ դրա մասի համար:

5. **Էլիցենզիա ունեցող** յուրաքանչյուր անձ, ով զբաղվում է կանեփի և/կամ կանեփի արտադրանքի արտադրությամբ կամ մշակությամբ, վճարում է \$20.00-ի չափով գործարար հարկ համախառն եկամտի յուրաքանչյուր \$1,000.00-ի կամ դրա մասի համար:

6. **Էլիցենզիա ունեցող** յուրաքանչյուր անձ, ով զբաղվում է սույն բաժնի համաձայն հատուկ կերպով չհարկվող կանեփի և/կամ կանեփի արտադրանքի առևտրայնացմամբ, վճարում է \$20.00-ի չափով գործարար հարկ համախառն եկամտի յուրաքանչյուր \$1,000.00-ի կամ դրա մասի համար:

Բաժ. 3. Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1-ին հոդվածի 21.51 բաժնի (d) ենթաբաժինը, որը վերաբերում է կանեփի բիզնեսների հարկմանը, փոփոխվում է հետևյալ կերպով.

(d) Բոլոր գործարար հարկերը վճարվում են եռամսյակային կտրվածքով՝ համաձայն սույն հոդվածի 21.04(b) բաժնի՝ սկսած 2018 թվականի հուլիսի 1-ից, որը ներառում է 2018 թվականի հունվարի 1-ից պարտք մնացած բոլոր հարկերը, ապա՝ ամսական՝ համաձայն սույն հոդվածի 21.04(c) բաժնի՝ սկսած 2019 թվականի հուլիսի 1-ից: Սույն գործարար հարկերը վճարվում են անկախ նրանից, արդյոք անձը ստացել է լիցենզիա, թե գործում է առանց լիցենզիայի:

Բաժ. 4. Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1-ին հոդվածի 21.51 բաժնի (f) ենթաբաժինը, որը վերաբերում է կանեփի բիզնեսների հարկմանը, փոփոխվում է հետևյալ կերպով.

(f) Ֆինանսների մասով տնօրենը կարող է սահմանել այնպիսի լրացուցիչ պահանջներ կամ պայմաններ, ինչպես նախատեսված է սույն հոդվածի 21.15(h) բաժնում, սույն հոդվածի 21.08 բաժնի համաձայն գործարար հարկի գրանցման վկայական տրամադրելիս՝ սույն բաժնին ենթակա անձի վերաբերյալ, որոնք, հնարավոր է՝ ներառեն կամ չներառեն համապատասխանության մասին երդմագիր և/կամ լիցենզիայի ապացույց: Սույն բաժնի համաձայն պահանջվող ցանկացած երդմագրում կեղծ հայտարարություն կամ խեղաթյուրում կատարած ցանկացած անձ մեղավոր է մակր հանցագործության մեջ:

Բաժ. 5. Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1-ին հոդվածի 21.52 բաժնի (b) ենթաբաժինը, որը վերաբերում է բժշկական կանեփի բիզնեսների հարկմանը, փոփոխվում է հետևյալ կերպով.

(b) Սույն բաժնի նպատակների համար գանձվող գործարար հարկը հետևյալն է.

1. ~~Լիցենզիա ունեցող~~ յուրաքանչյուր անձ, ով զբաղվում է բժշկական կանեփի վաճառքով, վճարում է \$50.00-ի չափով գործարար հարկ համախառն եկամտի յուրաքանչյուր \$1,000.00-ի կամ դրա մասի համար:

Բաժ. 6. Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1-ին հոդվածի 21.52 բաժնի (d) ենթաբաժինը, որը վերաբերում է բժշկական կանեփի բիզնեսների հարկմանը, փոփոխվում է հետևյալ կերպով.

(d) Բոլոր գործարար հարկերը վճարվում են եռամսյակային կտրվածքով՝ համաձայն սույն հոդվածի 21.04(b) բաժնի՝ սկսած 2018 թվականի հուլիսի 1-ից, որը ներառում է 2018 թվականի հունվարի 1-ից պարտք մնացած բոլոր հարկերը, ապա՝ ամսական՝ համաձայն սույն հոդվածի 21.04(c) բաժնի՝ սկսած 2019 թվականի հուլիսի 1-ից: Այս գործարար հարկերը վճարվում են անկախ նրանից, առոյոք անձը ստացել է լիցենզիա, թե գործում է առանց լիցենզիայի:

Բաժ. 7. Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1-ին հոդվածի 21.52 բաժնի (f) ենթաբաժինը, որը վերաբերում է բժշկական կանեփի բիզնեսների հարկմանը, փոփոխվում է հետևյալ կերպով.

(f) Ֆինանսների մասով տնօրենը կարող է սահմանել այնպիսի լրացուցիչ պահանջներ կամ պայմաններ, ինչպես նախատեսված է սույն հոդվածի 21.15(h) բաժնում, սույն հոդվածի 21.08 բաժնի համաձայն գործարար հարկի գրանցման վկայական տրամադրելիս՝ սույն բաժնին ենթակա անձի վերաբերյալ, որոնք, հնարավոր է՝ ներառեն կամ չկերառեն համապատասխանության մասին երդմագիր և/կամ լիցենզիայի ապացույց: Սույն բաժնի համաձայն պահանջվող ցանկացած երդմագրում կեղծ հայտարարություն կամ խեղաթյուրում կատարած ցանկացած անձ մեղավոր է մանր հանցագործության մեջ:

Բաժ. 8. Ներկայացում ընտրողներին: Սույն հրամանագիրը ներկայացվում է քաղաքի ընտրողներին: Եթե հրամանագիրը հաստատվի քվեների մեծամասնությամբ, այն ուժի մեջ կմտնի, և սույնում նշված կիրառելի բաժինները հետագայում կհամարվեն Los Angeles-ի տեղական օրենսգրքի մաս:

Բաժ. 9. Փոփոխություններ: Զաղաքային խորհուրդը կարող է փոփոխել սույն հրամանագրի ցանկացած դրույթ, սակայն ցանկացած փոփոխություն, որը կհանգեցնի հարկի սահմանմանը, երկարաձգմանը կամ ավելացմանը, կպահանջի ընտրողների հաստատումը:

Բաժ. 10. Բաժանելիություն: Եթե սույն հրամանագրի ցանկացած բաժին, ենթաբաժին, կետ, նախադասություն, արտահայտություն կամ կիրառում կամ դրա որևէ մաս ճանաչվի հակասահմանադրական կամ անվավեր ցանկացած իրավասության դատարանի կամ տրիբունալի կողմից, հրամանագրի մնացած բաժինները, ենթաբաժինները, կետերը, նախադասությունները, արտահայտությունները, մասերը կամ կիրառությունները կմնան լիովին ուժի և գործողության մեջ, և այդ նպատակով սույն հրամանագրի դրույթները բաժանելի են: Բացի այդ, ընտրողները հայտարարում են, որ իրենք կընդունեն սույն հրամանագրի բոլոր բաժինները, ենթաբաժինները, կետերը, նախադասությունները, արտահայտությունները, մասերը և կիրառությունները՝ բացառությամբ այն բաժնի, ենթաբաժնի, կետի, նախադասության, արտահայտության, մասի կամ կիրառության, որը ճանաչվել է հակասահմանադրական կամ անվավեր:

Արդյո՞ք պետք է ընդունվի հրամանագիր արդիացնելու համար հյուրանոցների և կացարանների հյուրերի կողմից վճարվող ժամանակավոր բնակության հարկը, պահանջելու համար առցանց և այլ տուրիստական ընկերություններից հավաքել և վճարել հարկը (ներկայիս դրույքաչափը կազմում է 14 տոկոս), տարիկան մոտավորապես 5 միլիոն դոլար գեներացնելով այնպիսի ընդհանուր քաղաքապետարանի ծառայությունների համար, ինչպիսիք են փողոցների և մայթերի վերանորոգումը, 911 արտակարգ իրավիճակներին արձագանքումը, հրդեհային պաշտպանությունը և այգիները՝ մինչև ընտրողների որոշմամբ չեղարկումը:

ԱՆԿՈՂՄԱԿԱՆ ԱՍՓՈՓՈՒՄ**SHARON M. TSO-Ի՝ ՕՐԵՆՍԻՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԵՐԼՈՒԾՄԱՆԻ ԿՈՄԻՏԵ**

Los Angeles քաղաքի տեղական օրենսգրքի (LAMC) II գլխի 1.7 հոդվածը սահմանում է ուղեցույցներ քաղաքի ժամանակավոր բնակության հարկի (TOT) համար, որը հարկ է, որը վճարում է յուրաքանչյուր հյուր, ով հյուրանոցային սենյակ կամ տարածք է զբաղեցրել 30 կամ ավելի քիչ անընդմեջ օր: Ներկայիս TOT-ը կազմում է հյուրի կողմից վճարված ընդհանուր վարձավճարի 14 տոկոսը՝ ներառյալ բոլոր գանձումները և սպասարկման վճարները:

Առցանց տուրիստական գործակալությունները, հարթակները, ընկերությունները և այլ նմանատիպ միջնորդներ գործում են՝ հյուրանոցների հետ բանակցելով հյուրանոցային սենյակների զեղչված կամ մեծածախ գնի շուրջ, այնուհետև հյուրերից գանձելով ավելի բարձր գումար՝ սենյակը զբաղեցնելու իրավունքի համար ավելացնելով այլ գանձումներ և սպասարկման վճարներ: Այս լրացուցիչ վճարներն ու սպասարկման վճարները չեն մտնում գործող TOT-ի ուղեցույցների շրջանակի մեջ: LAMC-ի համաձայն՝ հյուրանոցները և առցանց հյուրանոցային կազմակերպությունները կարող են վճարել TOT-ը՝ հիմնվելով սենյակի սկզբնական բանակցային արժեքի վրա, այլ ոչ թե TOT-ը վճարել հյուրից սենյակը զբաղեցնելու համար գանձված իրական վարձավճարի հիման վրա՝ ներառյալ առցանց տուրիստական ընկերությունների կողմից ավելացված բոլոր գանձումները և սպասարկման վճարները:

Այս օրենսդրական նախագիծը կփոփոխի LAMC-ը՝ թարմացնելու համար վարձավճարի սահմանումը՝ վարձակալի կողմից վճարված ընդհանուր գումարի տեսքով TOT-ը հաշվարկելու նպատակով՝ ներառյալ հետևյալ գանձումներն ու սպասարկման վճարները.

- Զեղչված սենյակի վճարներ – Վարձակալվող հյուրանոցում սենյակի զբաղեցման համար առցանց տուրիստական ընկերությունից, ամրագրման գործակալից կամ սենյակի վերավաճառողից հյուրանոցի կողմից գանձվող ընդհանուր գումարը,
- Աջակցման վճարներ – Այն գումարը, որով սենյակի հայտարարված վճարը գերազանցում է զեղչված սենյակի վճարը՝ առկայության դեպքում,
- Գործարքի վճարներ, սպասարկման վճարներ, ամրագրման վճարներ, մշակման վճարներ, մանրածախ առևտրի հավելագներ, միջնորդավճարներ, ամրագրման չեղարկման և հրաժարման վճարներ, ինչպես նաև California-ի զբոսաշրջային մարքեթինգի գնահատումներ,

- Չվերադարձվող նախնական ամրագրման և այլ վարձակալության կանխավճարներ,
- Ապրանքների կամ ծառայությունների համար գանձվող վճարներ,
- Որևէ վաճառողի կողմից մրցանակային կամ պարզևատրման ծրագրից ստացված վճար կամ արժեք, և
- Ցանկացած այլ գանձում, որը ողջամտորեն վերագրվում է վարձավճարին, որը կազմում է ճանապարհորդական փաթեթի մաս:

Բացի այդ, այս օրենսդրական նախագիծը թարմացնում է հյուրանոցի բոլոր օպերատորների համար հավաքագրման պահանջները և ավելացնում է հաշվետվությունների պահանջներ առցանց տուրիստական գործակալությունների, ընկերությունների, հարթակների և այլ նմանատիպ միջնորդների մասով: Այս օրենսդրական նախագծի շրջանակներում հավաքագրված TOT եկամուտը կփոխանցվի քաղաքի ընդհանուր հիմնադրամին և կօգտագործվի քաղաքային այնպիսի ծառայությունների ֆինանսավորման համար, ինչպիսիք են փողոցների և մայթերի վերանորոգումը և հրդեհային պաշտպանությունը:

Առանձին քվեաթերթիկի օրինագծով նմանատիպ փոփոխություններ են մտցվում LAMC-ում քաղաքի TOT հրամանագրի մեջ վարձավճարի սահմանման վերաբերյալ: Այս քվեաթերթիկի օրինագիծը ներառում է դրույթ այն մասին, որ այն լրացնում է և չի հակասում մյուս TOT օրենսդրական նախագծին: Դրույթը սահմանում է, որ եթե երկու օրենսդրական նախագիծն էլ ստանա ընտրողների մեծամասնության հավանությունը, ապա երկու միջոցառումների բոլոր դրույթներն էլ ուժի մեջ են մտնում և վավերական են դառնում:

Այս օրենսդրական նախագիծն ուժի մեջ կմտնի, եթե այն հաստատվի ընտրողների մեծամասնության կողմից:

ՖԻԼԱՆՍԱԿԱՆ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MATTHEW W. SZABO-Ի ՎԱՐՉԱԿԱՆ ԳԾՈՎ ԶԱՂԱՔԻ ԴԱՇՏՈՆՅԱ

Այս օրենսդրական նախագիծը քաղաքի ժամանակավոր բնակության հարկը TOT կթարմացնի՝ առցանց տուրիստական ընկերությունների հետ կապված սողանցքը փակելու համար: Այն պահանջում է, որ առցանց տուրիստական ընկերությունները հավաքեն և վճարեն հյուրանոցային համար ամրագրելիս գանձվող բոլոր սպասարկման վճարների և գանձումների TOT-ը: Այս օրենսդրական նախագիծը չի ազդում ներկայիս TOT դրույքաչափի վրա: Ըստ գնահատականների՝ այս օրենսդրական նախագիծը քաղաքի համար տարեկան կապահովի մոտ 5 միլիոն դոլարի եկամուտ: Եկամուտը կփոխանցվի Ընդհանուր հիմնադրամ և կօգտագործվի քաղաքային այնպիսի ընդհանուր ծառայությունների համար, ինչպիսիք են հրշեջ ծառայության և ոստիկանության արձագանքը, փողոցների և մայթերի վերանորոգումը, տրանսպորտը և այլ նպատակներով: Այս օրենսդրական նախագիծը չի ենթադրում որևէ լրացուցիչ ծախս քաղաքի համար:

TC ԱՌԱՋԱՐԿԻ ՕԳՏԻՆ ՓԱՍՏԱՐԿ

TC ԱՌԱՋԱՐԿԸ ապահովում է, որ Los Angeles քաղաքը հավաքագրի իրեն արդեն իսկ վճարման ենթակա եկամուտը և արդիականացնում է ժամանակավոր բնակության հարկի (TOT) համակարգը՝ արտացոլելու համար այսօրվա ճանապարհորդության և ամրագրման պրակտիկան: Ներկայումս օրենսդրության մեջ առկա սողանցքները թույլ են տալիս որոշ առցանց տուրիստական ընկերություններին հարկերը վճարել միայն հյուրանոցներին վճարվող գեղչված մեծածախ գնի, այլ ոչ թե հյուրերի կողմից վճարված ամբողջական գնի հիման վրա: Սա նշանակում է, որ քաղաքը կորցնում է եկամուտներ, որոնք պետք է աջակցեն կենսականորեն կարևոր հանրային ծառայություններին:

Այս նախագիծը նոր հարկ չի ստեղծում, այն փակում է սողանցքները և արդիականացնում հնացած կանոնները, որպեսզի համակարգը գործի նախատեսված կարգով: Պահանջելով առցանց տուրիստական ընկերություններից և հարթակներից հավաքագրել և վճարել TOT հաճախորդների կողմից վճարված ամբողջ գումարի համար, և պարզաբանելով, թե հյուրանոցների հետ կապված որ վճարներն են հարկվում, այս նախագիծով լրացվում է օրենսգրքի հնացած բացերը և ապահովում արդար և հետևողական հարկերի հավաքագրում հյուրանոցային ոլորտում:

Գներերացված եկամուտն օգնում է ֆինանսավորել այնպիսի կենսականորեն կարևոր ծառայություններ, ինչպիսիք են արտակարգ իրավիճակներին արձագանքելը, ենթակառուցվածքները պահպանելը և թաղամասային ներդրումները, որոնցից բնակիչները կախված են ամեն օր: Կարևոր է, որ հարկը վճարում են հյուրանոցներում կամ կարճաժամկետ կացարաններում մնացող այցելուները, այլ ոչ թե Los Angeles-ի բնակիչների մեծ մասը:

TC ԱՌԱՋԱՐԿԻՆ ԱՅՈՒ ԸՎԵԱՐԿԵԼՈՎ Ապահովվում է արդարություն, հաշվետվողականություն և Los Angeles-ի բնակական գործունեությունն ապահովող ծառայությունների կայուն ֆինանսավորում:

TC ԱՌԱՋԱՐԿԻ ՕԳՏԻՆ ՓԱՍՏԱՐԿԸ ԱՏՈՐԱԳՐՈՂ ԱՆՁԻՆԸ

TIM MCOSKER
Խորհրդի անդամ, շրջան 15
City of LA

DOANE LIU
Քաղաքի տուրիզմի գլխավոր պաշտոնյա
City of LA

EUNISSES HERNANDEZ
Խորհրդի անդամ, շրջան 1
City of LA

BOB BLUMENFIELD
Խորհրդի անդամ, շրջան 3
City of LA

MATT SZABO
Քաղաքի վարչական պաշտոնյա
City of LA

ՍՈՒՅՆ ՆԱԽԱԳԾԻ ԴԵՄ ՈՐԵՎԷ ՓԱՍՏԱՐԿ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ:

Այս էջում տպագրված փաստարկները հեղինակների կարծիքներն են, եւ դրանց ճշմարտացիությունը չի ստուգվում քաղաքային որևէ կազմակերպության կողմից:

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ _____

Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1.7 հոդվածի որոշ մասերի փոփոխման հրամանագիր՝ պահանջելու առցանց տուրիստական գործակալություններից, ընկերություններից և հարթակներից հավաքագրել և փոխանցել Los Angeles քաղաքի ժամանակավոր բնակության հարկը հյուրանոցային սենյակի համար սահմանված բոլոր գանձումներից և վճարներից: (Տեղական օրենսգրքի լեզվի փոփոխությունները ներկայացված են ընդգծմամբ՝ ավելացված լեզվի համար և գծիկով՝ ջնջված լեզվի համար:)

ՔԱՆԻ ՈՐ Los Angeles-ի տեղական օրենսգրքով սահմանվում է քաղաքի ժամանակավոր բնակության հարկը (Transient Occupancy Tax, TOT), որը հարկ է, որը վճարում է այն անձը, ով զբաղեցնում է սենյակ կամ տարածք հյուրանոցում՝ համաձայն TOT հրամանագրի,

ՔԱՆԻ ՈՐ Ֆինանսների գրասենյակը հրապարակել է զեկույցներ, որոնցում վերլուծվում է TOT հավաքագրման պակասը, որն առաջանում է, երբ հյուրանոցային համարներն ամրագրվում են առցանց տուրիստական ընկերությունների միջոցով (տե՛ս հտորիդի թիվ 23-0318 և 24-1456 թղթապանակները),

ՔԱՆԻ ՈՐ, ինչպես վերլուծվել է Ֆինանսների գրասենյակի զեկույցներում, առցանց տուրիստական ընկերությունների կողմից օգտագործվող բիզնես մոդելը, որի դեպքում առցանց տուրիստական ընկերությունը բանակցում է հյուրանոցային սենյակների գեղջված կամ մեծածախ գնի շուրջ, բայց այնուհետև սպառողից գանձում է ավելի բարձր գումար սենյակը զբաղեցնելու իրավունքի համար, հանգեցնում է սենյակների հետ կապված գանձումների, որոնք դուրս են գործող TOT-ի շրջանակներից,

ՔԱՆԻ ՈՐ քաղաքի վարչական պաշտոնյան հրապարակել է զեկույց, որում նշվում են քաղաքի ընդհանուր գործառնական բյուջեի համար ֆինանսական օգուտները՝ կապված TOT հավաքագրման այս բացը լրացնելու հետ, որն առաջանում է առցանց տուրիստական ընկերությունների կողմից վճարվող մեծածախ կամ գեղջված գների և առցանց տուրիստական ընկերության միջոցով հյուրանոցային համարների համար վճարող՝ հյուրանոցի հյուրերի կողմից վճարվող գումարի միջև դրամական տարբերության պատճառով, և

ՔԱՆԻ ՈՐ սույն քվեաթերթիկի նախագիծը, եթե հաստատվի ընտրողների կողմից, կթարմացնի քաղաքի գործող TOT հրամանագիրը՝ լուծելու առցանց տուրիստական ընկերությունների բիզնես գործունեությունից բխող հավաքագրման պակասը:

ՀԵՏԵՎԱԲԱՐ

**LOS ANGELES ԶԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱԴՐՈՒՄ Ե ՀԵՏԵՎՅԱԼԸ.**

Բաժին 1: Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1.7 հոդվածի 21.7.2 բաժնի առաջին պարբերությունը փոփոխվում է հետևյալ կերպով.

Բացառությամբ այն դեպքերի, երբ համատեքստն այլ բան է պահանջում, սույն բաժնում տրված սահմանումները որոշում են սույն հոդվածի մեկնաբանությունը: Սահմանումները նախատեսված են լայնորեն մեկնաբանվելու՝ հօգուտ սույն հոդվածով նախատեսված հարկի սահմանման, գանձման և փոխանցման:

Բաժ. 2. Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1.7 հոդվածի 21.7.2 բաժնի (e) ենթաբաժինը փոփոխվում է հետևյալ կերպով.

(e) Վարձավճար: «Վարձավճար» նշանակում է հյուրանոցում տարածքի զբաղեցման համար գանձվող վճար, անկախ նրանից՝ ստացվել է այն թե չի ստացվել, և գնահատվում է փողով, անկախ նրանից՝ ստացվում է փողով, ապրանքներով, աշխատանքով կամ այլ կերպ՝ ներառյալ բոլոր մուտքերը, կանխիկ գումարները, հաշվանցումները, ցանկացած տեսակի կամ բնույթի գույքն ու ծառայությունները՝

առանց դրանցից պահումների, և ներառում է, առանց սահմանափակման, հետևյալը. էյս-սահմանման մեջ ոչինչ չպետք է մեկնաբանվի այնպես, որ հյուրանոցում տարածքի զբաղեցման համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն գանձվում է վարձավճար, երբ այդ տարածքն օպերատորի կողմից տրամադրվում է բնակչին որպես կոմպլիմենտ, և որևէ այլ անձից որևէ վճար չի գանձվում կամ չի ստացվում

1. գեոչված սենյակի վճարներ և աջակցման վճարներ,
2. գործարքի վճարներ, սպասարկման վճարներ, ամրագրման վճարներ, մշակման վճարներ, մանրածախ առևտրի հավելյալներ, միջնորդավճարներ, ամրագրման չեղարկման և հրաժարման վճարներ, ինչպես նաև California-ի զբոսաշրջային մարտեթևիզի գնահատումներ,
3. չվերադարձվող նախնական ամրագրման և այլ վարձակալության կանխավճարներ,
4. ապրանքների կամ ծառայությունների համար գանձվող վճարներ, ներառյալ, առանց սահմանափակման՝ կահույքի, սարքավորումների, կենցաղային տեխնիկայի, սպիտակեղենի, սրբիչների, մետաղադրամով չաշխատող սեյֆերի, սպա կամ մարզման կենտրոնների օգտագործման կամ մուտքի, հանգստավայրի օգտագործման կամ մուտքի (սովորաբար անվանում են հանգստավայրի կամ նպատակակետի վճարներ), ինտերնետի, հեռուստացույցի և հեռախոսի օգտագործման կամ մուտքի, սենյակների մաքրման, ընտանի կենդանիների տեղակայման, ընտանի կենդանիների վճարների կամ ընտանի կենդանիների հետ կապված մաքրման, լրացուցիչ/ժամանակավոր հյուրերի, և/կամ մասնակի օրերի, կամ վաղ կամ ուշ ժամանման կամ մեկնման համար վճարներ,
5. որևէ օպերատորի կողմից մոզանակային կամ պարզևատրման ծրագրից ստացված վճարը կամ արժեքը՝ ներառյալ մոզանակի կամ պարզևատրման միավորների, խրախուսանքների կամ բոնուսների մարումը, և
6. ցանկացած այլ գանձում, որը ողջամտորեն վերագրվում է վարձավճարին, որը կազմում է ճանապարհորդական փաթեթի մաս:

Այս սահմանման մեջ ոչինչ չպետք է մեկնաբանվի այնպես, որ հյուրանոցում տարածքի զբաղեցման համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն գանձվում է վարձավճար, երբ այդ տարածքն օպերատորի կողմից տրամադրվում է բնակչին որպես կոմպլիմենտ, և որևէ այլ անձից որևէ վճար չի գանձվում կամ չի ստացվում:

Բաժ. 3. Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1.7 հոդվածի 21.7.2 բաժնի (f) ենթաբաժինը փոփոխվում է հետևյալ կերպով.

(f) Օպերատոր: «Օպերատոր» նշանակում է ցանկացած անձ, ով գլխավոր կամ երկրորդական օպերատոր է: Անձ, ով կամ հյուրանոցի սեփականատեր է, կամ որևէ այլ անձ, ով իրավունք ունի հյուրանոցում սենյակներ վարձակալելու՝ սեփականատիրոջ, վարձակալի, հիփոթեքային կրեդիտորի, լիցենզիա ստացողի կամ որևէ այլ կարգավիճակով: Հյուրանոցի շահագործման համար հիմնական պատասխանատվություն կրող սեփականատերը կամ տերը համարվում է գլխավոր օպերատոր: Եթե գլխավոր օպերատորը կատարում կամ հանձնարարում է իր գործառույթները, ամբողջությամբ կամ մասնակիորեն, կառավարող գործակալի, ամրագրման գործակալի, սենյակների վաճառողի կամ սենյակների վերապահառողի կամ որևէ այլ գործակալի կամ պայմանագրային հիմունքով աշխատող անձի միջոցով՝ ներառյալ, առանց սահմանափակման, սույն օրենսգրքի 12.03 բաժնում

սահմանված հյուրընկալման հարթակները, առցանց սենյակների վաճառողները, առցանց սենյակների վերավաճառողները և առցանց տուրիստական գործակալները՝ աշխատակցից բացի ցանկացած տեսակի կամ բնույթի, այդ անձինք համարվում են երկրորդական օպերատորներ:

Երկրորդական օպերատորը համարվում է օպերատոր սույն հոդվածի նպատակների համար և ունի նույն պարտականություններն ու պարտավորությունները, ինչ գլխավոր օպերատորը՝ ներառյալ, առանց սահմանափակման, սույն հոդվածի դրույթների համաձայն՝ վճարման ենթակա հարկի ամբողջ գումարի հավաքագրումը և քաղաքին փոխանցումը: Երկրորդական օպերատորը կարող է կատարել իր պարտավորությունները սույն հոդվածի դրույթներով սահմանված կարգով՝ ներկայացնելով սույն հոդվածով նախատեսված հարկի ամբողջական գումարը՝ հաշվանցելով ցանկացած այլ օպերատորին վճարված ցանկացած հարկ՝ կամ անմիջապես ֆինանսների մասով տնօրենին, կամ գլխավոր օպերատորի միջոցով:

Սույն հոդվածի դրույթներին համապատասխանությունը գլխավոր կամ երկրորդական օպերատորի կողմից համարվում է համապատասխանություն երկուսի կողմից էլ, և սույն հոդվածի ոչ մի դրույթ չի պահանջում վճարել և/կամ փոխանցել որևէ գումար՝ բացի ժամանակավոր հյուրից գանձվելիք հարկի լրիվ գումարից:

Բաժ. 4. Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1.7 հոդվածի 21.7.2 բաժնում ալվելացվում են (g)-ից մինչև (n) նոր ենթաբաժիններ՝ հետևյալ կերպով.

(g) Աջակցման վճար: «Աջակցման վճար» նշանակում է այն գումարը, որով սենյակի հայտարարված վճարը գերազանցում է գեղչված սենյակի վճարը՝ առկայության դեպքում:

(h) Միջնորդ: «Միջնորդ» նշանակում է ցանկացած անձ, ով ուղղակիորեն կամ անուղղակիորեն (i) աջակցում է հյուրանոցում բնակության հաստատմանը և (ii) գանձում, հավաքագրում կամ ստանում է վարձավճար այդ բնակության կապակցությամբ, որը կարող է ներառել, առանց սահմանափակման, աջակցման վճար: Միջնորդը ներառում է, առանց սահմանափակման, ճանապարհորդական կամ ամրագրման գործակալին, սույն օրենսգրքի 12.22 A.32 բաժնում սահմանված հյուրընկալման հարթակին, սենյակների վաճառողին կամ վերավաճառողին, առցանց սենյակների վաճառողին կամ վերավաճառողին, ինչպես նաև ցանկացած տեսակի կամ բնույթի առցանց ճանապարհորդական գործակալին կամ ընկերությանը:

(i) Աջակցում է հյուրանոցում բնակության հաստատմանը: «Աջակցում է հյուրանոցում բնակության հաստատմանը» նշանակում է միջնորդել, համակարգել կամ այլ կերպ կազմակերպել (հաճախորդի) լայն հանրության կողմից հյուրանոցում համարներ գնելը, վաճառելը կամ բնակության իրավունքը:

(j) Չեղչված սենյակի վճար: «Չեղչված սենյակի վճար» նշանակում է օպերատորի կողմից երկրորդական օպերատորից գանձվող ընդհանուր գումարը հյուրանոցում վարձակալվող սենյակի համար:

(k) Սենյակի հայտարարված վճար: «Սենյակի հայտարարված վճար» նշանակում է միջնորդի կողմից ժամանակավոր հյուրից գանձվող ընդհանուր գումարը՝ ներառյալ վաճառքի հետ կապված ցանկացած վճար կամ գանձում՝ հարկերից առաջ:

(l) Ճանապարհորդական փաթեթ: «Ճանապարհորդական փաթեթ» նշանակում է տեղավորում, որի մեջ ներառվում է մեկ կամ մի քանի առանձին բաղադրիչ, ինչպիսիք են օդային տրանսպորտը, մեքենայի վարձույթը կամ նմանատիպ ծառայությունները, որը գանձվում է մեկ մանրածախ գնով:

(m) Երկրորդական օպերատոր: «Երկրորդական օպերատոր» նշանակում է ցանկացած անձ, ով հանդիսանում է կառավարող գործակալ, ամրագրման գործակալ, սեյակների վաճառող կամ սեյակների վերավաճառող, բրոքեր, միջնորդ կամ ցանկացած այլ գործակալ կամ պայմանագրային հիմունքով աշխատող անձ՝ այդ թվում, առանց սահմանափակման, սույն օրենսգրքի 12.22 A.32 բաժնում սահմանված հյուրընկալման հարթակը, առցանց սեյակների վաճառողը, առցանց սեյակների վերավաճառողը և առցանց տուրիստական գործակալը, ցանկացած տեսակի կամ բնույթի, ում գլխավոր օպերատորն ամբողջությամբ կամ մասնակիորեն հանձնարարում է իր որևէ գործառույթ՝ բացի աշխատակցից:

(n) Գլխավոր օպերատոր: «Գլխավոր օպերատոր» նշանակում է ցանկացած անձ, ով իրավունք ունի հյուրանոցում սեյակներ վարձակալել հյուրանոցի սեփականատիրոջ, վարձակալի, հիփոթեքային կրեդիտորի, լիցենզիա ստացողի կամ որևէ այլ կարգավիճակով, և ով հիմնական պատասխանատվություն է կրում հյուրանոցի շահագործման համար:

Բաժ. 5. Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1.7 հոդվածի 21.7.5 բաժինը փոփոխվում է հետևյալ կերպով.

ԲԱԺ. 21.7.5. ՕՊԵՐԱՏՈՐԻ ԴՈՐԱՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Յուրաքանչյուր օպերատոր հավաքագրում է սույն հոդվածով սահմանված հարկը նույն չափով և նույն ժամանակ, ինչ վարձավճարը հավաքագրվում է ամեն ժամանակավոր հյուրից: Հարկի գումարը նշվում է գանձվող վարձավճարի գումարից առանձին, և յուրաքանչյուր ժամանակավոր հյուր օպերատորից պետք է ստանա վճարման կտրոն: Հյուրանոցի որևէ օպերատոր չպետք է գովազդի կամ որևէ կերպ հայտարարի, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, որ հարկը կամ որևէ մաս կտանձնի կամ կծածկի նման օպերատորը, կամ որ այն չի ավելացվի վարձավճարին, կամ որ ավելացման դեպքում դրա որևէ մաս կփոխհատուցվի՝ բացառությամբ սույնում նշված դեպքերի: Երկրորդական օպերատորը կարող է կատարել իր պարտավորությունները սույն հոդվածի դրույթներով սահմանված կարգով՝ ներկայացնելով սույն հոդվածով նախատեսված հարկի ամբողջական գումարը՝ հաշվանցելով համապատասխան օպերատորին վճարված ցանկացած հարկ՝ կամ անմիջապես ֆինանսների մասով տնօրենին, կամ այդ համապատասխան այլ օպերատորի միջոցով: Սույն հոդվածի դրույթներին համապատասխանությունը գլխավոր կամ երկրորդական օպերատորի կողմից համարվում է համապատասխանություն երկուսի կողմից էլ՝ կիրառելի հարկային պարտավորության առնչությամբ, և սույն հոդվածի ոչ մի դրույթ չի պահանջում վճարել և/կամ փոխանցել որևէ գումար՝ բացի ժամանակավոր հյուրից գանձվելից հարկի լրիվ գումարից:

Բաժ. 6. Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1.7 հոդվածի 21.7.7 բաժինը առաջին պարբերությունը փոփոխվում է հետևյալ կերպով.

Յուրաքանչյուր Օպերատոր յուրաքանչյուր օրացուցային ամսվա 25-րդ օրը կամ դրանից առաջ ֆինանսների մասով տնօրենին ներկայացնում է հաշվետվություն գանձված և ստացված ընդհանուր վարձավճարների, ինչպես նաև նախորդ օրացուցային ամսվա ընթացքում ժամանակավոր հյուրերի համար հավաքագրված հարկի գումարի վերաբերյալ՝ ներառյալ նախորդ օրացուցային ամսվա համար յուրաքանչյուր երկրորդական օպերատորից ստացված վարձավճարի գումարի մասին հաշվետվություն՝ կիրառելի չափով: Հաշվետվության ներկայացման պահին հավաքագրված հարկի և չհավաքագրված, բայց հավաքագրման ենթակա հարկի ամբողջ գումարը փոխանցվում է ֆինանսների մասով տնօրենին: Բացառությամբ 21.7.8 բաժնում նշված դեպքերի՝ օպերատորը պարտավոր է ֆինանսների մասով տնօրենին փոխանցել ցանկացած հարկի գումար, որը չի հավաքագրվել և չպետք է հավաքագրվի ժամանակավոր հյուրից: Սույն հոդվածի համաձայն՝ օպերատորների

կողմից հավաքագրված և հավաքագրման ենթակա բոլոր հարկերը մինչև քաղաքին փոխանցվելը պահվում են վստահված կառավարման մեջ՝ ի շահ քաղաքի: Սույն հոդվածի համաձայն՝ վճարման ենթակա հարկի ամբողջ գումարը, անկախ նրանից՝ հավաքագրվել էր, թե ենթակա էր վճարման, բայց չէր հավաքագրվել, համարվում է օպերատորի կողմից քաղաքին պարտք և պետք է մարվի միայն քաղաքին վճարելուց հետո:

Բաժ. 7. Ներկայացում ընտրողներին: Սույն հրամանագիրը ներկայացվում է քաղաքի ընտրողներին: Եթե հրամանագիրը հաստատվի քվեների մեծամասնությամբ, այն ուժի մեջ կմտնի, և սույնում նշված կիրառելի բաժինները հետագայում կհամարվեն Los Angeles-ի տեղական օրենսգրքի մաս:

Բաժ. 8. Փոփոխություններ: Խորհուրդը կարող է փոփոխել սույն հրամանագրի ցանկացած դրույթ, սակայն ցանկացած փոփոխություն, որը կհանգեցնի հարկի սահմանմանը, երկարաձգմանը կամ ավելացմանը, կպահանջի ընտրողների հաստատումը:

Բաժ. 9. Բաժանելիություն: Եթե սույն հրամանագրի ցանկացած բաժին, ենթաբաժին, կետ, նախադասություն, արտահայտություն կամ կիրառում կամ դրա որևէ մաս ճանաչվի հակասահմանադրական կամ անվավեր ցանկացած իրավասության դատարանի կամ տրիբունալի կողմից, հրամանագրի մնացած բաժինները, ենթաբաժինները, կետերը, նախադասությունները, արտահայտությունները, մասերը կամ կիրառությունները կմնան լիովին ուժի և գործողության մեջ, և այդ նպատակով սույն հրամանագրի դրույթները բաժանելի են: Բացի այդ, ընտրողները հայտարարում են, որ իրենք կընդունեն սույն հրամանագրի բոլոր բաժինները, ենթաբաժինները, կետերը, նախադասությունները, արտահայտությունները, մասերը և կիրառությունները՝ բացառությամբ այն բաժնի, ենթաբաժնի, կետի, նախադասության, արտահայտության, մասի կամ կիրառության, որը ճանաչվել է հակասահմանադրական կամ անվավեր:

Բաժ. 10. Սույն նախագիծը քաղաքային խորհրդի և ընտրողների կողմից նախատեսված է որպես փոխլրացում և հավելում քաղաքային խորհրդի կողմից ընտրողներին ներկայացված ժամանակավոր բնակության հարկի բարձրացման վերաբերյալ քվեաթերթիկի նախագծին, որը պետք է ներառվի սույն նախագծի հետ սույն քվեաթերթիկում: Եթե երկու օրենսդրական նախագիծն էլ ստանա ընտրողների մեծամասնության հաստատումը, նախագծերի դրույթները կհամարվեն միմյանց փոխլրացնող և հավելյալ, ինչպես նաև իրար չհակասող, և երկու նախագծի բոլոր դրույթները կընդունվեն և կլինեն վավերական:

TT

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՑՈՎ: ՕՐԻՆԱԳԻՑ TT:

Արդյո՞ք պետք է ընդունվի հրամանագիր ֆինանսավորելու համար այնպիսի ընդհանուր քաղաքապետարանի ծառայություններ, ինչպիսիք են փողոցների/մայթերի վերանորոգումը, 911 արտակարգ իրավիճակներին արձագանքումը, հրդեհային պաշտպանությունը և այգիները՝ մինչև 16 տոկոս բարձրացնելով մինչև 2028 թվականը հյուրանոցների և կացարանների հյուրերի կողմից վճարվող ժամանակավոր բնակության հարկը, որը ներկայումս կազմում է 14 տոկոս, իսկ այնուհետև՝ մինչև 15 տոկոս, և պահանջելով առցանց և այլ տուրիստական ընկերություններից հավաքել և վճարել այդ հարկը, տարեկան մոտավորապես 22-44 միլիոն դոլար գնեերացնելով մինչև ընտրողների որոշմամբ դրա չեղարկումը:

ԱՆԿՈՂՆԱԿԱԼ ԱՄՓՈՓՈՒՄ

SHARON M. TSO-Ի՝ ՕՐԵՆՆԱՐԱԿԱԼ ՀԱՐՑԵՐՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆԻ ԿՈՐՄԻՏԵ

Los Angeles քաղաքի տեղական օրենսգրքի (LAMC) II գլխի 1.7 հոդվածը սահմանում է ուղեցույցներ քաղաքի ժամանակավոր բնակության հարկի (TOT) համար, որը հարկ է, որը վճարում է յուրաքանչյուր հյուր, ով հյուրանոցային սենյակ կամ տարածք է զբաղեցրել 30 կամ ավելի քիչ անընդմեջ օր: Ներկայիս TOT-ը կազմում է հյուրի կողմից վճարված ընդհանուր վարձավճարի 14 տոկոսը՝ ներառյալ բոլոր գանձումները և սպասարկման վճարները: 14 տոկոս TOT դրույքաչափն ուժի մեջ է 1993 թվականից: Այս օրենսդրական նախագիծը կփոփոխի LAMC-ը՝ մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը սահմանելով TOT դրույքաչափի ժամանակավոր երկու տոկոսանոց բարձրացում մինչև 16 տոկոս, ապա 2029 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սահմանելով TOT մշտական 15 տոկոս դրույքաչափ:

Առցանց տուրիստական գործակալությունները, ընկերությունները, հարթակները և այլ նմանատիպ միջնորդներ գործում են՝ հյուրանոցների հետ բանակցելով հյուրանոցային սենյակների զեղչված կամ մեծածախ գնի շուրջ, այնուհետև հյուրերից գանձելով ավելի բարձր գումար՝ սենյակը զբաղեցնելու իրավունքի համար ավելացնելով այլ գանձումներ և սպասարկման վճարներ: Այս լրացուցիչ վճարներն ու սպասարկման վճարները չեն մտնում գործող TOT-ի ուղեցույցների շրջանակի մեջ: LAMC-ի համաձայն՝ հյուրանոցները և առցանց հյուրանոցային կազմակերպությունները կարող են վճարել TOT-ը՝ հիմնվելով սենյակի սկզբնական բանակցային արժեքի վրա, այլ ոչ թե TOT-ը վճարել հյուրից սենյակը զբաղեցնելու համար գանձված իրական վարձավճարի հիման վրա՝ ներառյալ առցանց տուրիստական ընկերությունների կողմից ավելացված բոլոր գանձումները և սպասարկման վճարները:

Այս օրենսդրական նախագիծը նաև կփոփոխի LAMC-ը՝ թարմացնելու համար վարձավճարի սահմանումը՝ վարձակալի կողմից վճարված ընդհանուր գումարի տեսքով TOT-ը հաշվարկելու նպատակով՝ ներառյալ հետևյալ գանձումներն ու սպասարկման վճարները.

- Չեղջված սենյակի վճարներ – Վարձակալվող հյուրանոցում սենյակի զբաղեցման համար առցանց տուրիստական ընկերությունից, ամրագրման գործակալից կամ սենյակի վերավաճառողից հյուրանոցի կողմից գանձվող ընդհանուր գումարը,

- Աջակցման վճարներ – Այն գումարը, որով սենյակի հայտարարված վճարը գերազանցում է գեղչված սենյակի վճարը՝ առկայության դեպքում,
- Գործարքի վճարներ, սպասարկման վճարներ, ամրագրման վճարներ, մշակման վճարներ, մանրածախ առևտրի հավելագներ, միջնորդավճարներ, ամրագրման չեղարկման և հրաժարման վճարներ, ինչպես նաև California-ի զբոսաշրջային մարքեթինգի գնահատումներ,
- Չվերադարձվող նախնական ամրագրման և այլ վարձակալության կանխավճարներ,
- Ապրանքների կամ ծառայությունների համար գանձվող վճարներ,
- Որևէ վաճառողի կողմից մրցանակային կամ պարզևատրման ծրագրից ստացված վճար կամ արժեք, և
- Ցանկացած այլ գանձում, որը ողջամտորեն վերագրվում է վարձավճարին, որը կազմում է ճանապարհորդական փաթեթի մաս:

Բացի այդ, այս օրենսդրական նախագիծը թարմացնում է հյուրանոցի բոլոր օպերատորների համար հավաքագրման պահանջները և ավելացնում է հաշվետվությունների պահանջներ առցանց տուրիստական գործակալությունների, ընկերությունների, հարթակների և այլ նմանատիպ միջնորդների մասով: Այս օրենսդրական նախագծի շրջանակներում հավաքագրված TOT եկամուտը կփոխանցվի քաղաքի ընդհանուր հիմնադրամին և կօգտագործվի քաղաքային այնպիսի ծառայությունների ֆինանսավորման համար, ինչպիսիք են փողոցների և մայթերի վերանորոգումը և հրդեհային պաշտպանությունը:

Առանձին քվեաթերթիկի օրինագծով նմանատիպ փոփոխություններ են մտցվում LAMC-ում՝ քաղաքի TOT հրամանագրի մեջ վարձավճարի սահմանման վերաբերյալ: Այս քվեաթերթիկի օրինագիծը ներառում է դրույթ այն մասին, որ այն լրացնում է և չի հակասում մյուս TOT օրենսդրական նախագծին: Դրույթը սահմանում է, որ եթե երկու օրենսդրական նախագիծն էլ ստանա ընտրողների մեծամասնության հաստատումը, ապա երկու միջոցառումների բոլոր դրույթներն էլ ուժի մեջ են մտնում և վավերական են դառնում:

Այս օրենսդրական նախագիծն ուժի մեջ կմտնի, եթե այն հաստատվի ընտրողների մեծամասնության կողմից:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MATTHEW W. SZABO-Ի ՎԱՐՉԱԿԱՆ ԳԾՈՎ ԶԱՂԱՔԻ ՊԱՇՏՈՆՑԱ

Այս օրենսդրական նախագիծը մինչև 2028 թվականը քաղաքի ժամանակավոր բնակության հարկը TOT 14 տոկոսից կբարձրացնի մինչև 16 տոկոս: Այս աճը, կանխատեսումների համաձայն, կապահովի քաղաքի տարեկան 44 միլիոն դոլարի եկամուտ՝ 2028 թվականին քաղաքում և շրջակայքում տեղի ունեցող խոշոր միջոցառումների (Ներառյալ, առանց սահմանափակման, 2027 թվականի Սուպերբոլը և 2028 թվականի Օլիմպիական և Պարաօլիմպիկ խաղերը) ժամանակ քաղաքային ծառայությունների և ենթակառուցվածքների վրա ավելացած բեռը փոխհատուցելու համար: 2029 թվականին ընդհանուր քաղաքային ծառայությունների համար TOT-ի դրույթաչափը կնվազի մինչև 15 տոկոս, ինչը կապահովի մտավորապես 22 միլիոն դոլարի շարունակական տարեկան եկամուտ: Այս օրենսդրական նախագիծը նաև կթարմացնի TOT-ը՝ առցանց տուրիստական ընկերությունների հետ կապված սողանցքը փակելու համար: Այն պահանջում է, որ առցանց տուրիստական ընկերությունները հավաքեն և վճարեն հյուրանոցային համար ամրագրելիս գանձվող բոլոր սպասարկման վճարների և գանձումների TOT-ը: Այս օրենսդրական նախագիծը չի ենթադրում որևէ լրացուցիչ ծախս քաղաքի համար:

TT ԱՌԱՋԱՐԿԻ ԴԵՍ ՓԱՍՏԱՐԿ

ՔՎԵՆՐԿԵՔ Ո՞՞ TT ԱՌԱՋԱՐԿԻՆ՝ Los Angeles-ի հյուրանոցային հարկի բարձրացում

Los Angeles-ն արդեն ունի California-ի ամենաբարձր հյուրանոցային հարկերից մեկը՝ 14 տոկոս: TT առաջարկը բարձրացնում է ժամանակավոր բնակության հարկը (հյուրանոցային հարկ), որը կհանգեցնի այցելուների արտահոսքի Los Angeles քաղաքի սահմաններից, կնվազեցնի քաղաքապետարանի հիմնական ծառայությունների հարկային եկամուտները և կսպառնա աշխատատեղերին զբոսաշրջության ամբողջ տնտեսությունում:

Los Angeles-ի զբոսաշրջությունը համավարակից հետո լիովին չի վերականգնվել: Այցելուների պահանջարկը մնում է 2019 թվականի մակարդակից ցածր՝ մինչդեռ հյուրանոցների շահագործման ծախսերը շարունակում են աճել: Շատերն արդեն իսկ դժվարություններ են ապրում անձնակազմը, ծառայությունները և աշխատանքային ժամերը պահպանելու հարցում:

Վերջին երկու տարվա ընթացքում քաղաքը հյուրանոցային հարկից ստացված եկամուտների 28 միլիոն դոլարի պակասորդ ունի: Այս հարկերով ֆինանսավորվում են կենսականորեն կարևոր ծառայությունները, այդ թվում՝ ճանապարհները, այգիները և հասարակական անվտանգությունը: Զբոսաշրջության հարկի նոր բարձրացումը միայն մեծացնում է այս պակասորդը՝ այցելուներին ուղղորդելով դեպի հարակից քաղաքներ, ինչպիսիք են Long Beach-ը, Santa Monica-ն կամ Beverly Hills-ը:

Զբոսաշրջությունը նպաստում է կես միլիոնից ավելի լավ վարձատրվող աշխատատեղերին և խթանում տեղական ծախսերը ռեստորաններում, մշակութային հաստատություններում, զվարճանքի վայրերում և փոքր բիզնեսներում: Երբ այցելուները որոշում են մնալ և ծախսել քաղաքի սահմաններից դուրս, Los Angeles-ը կորցնում է կարևորագույն տնտեսական ակտիվությունը, որը պահպանում է փոքր բիզնեսը և տեղական աշխատատեղերը:

Հարկերի բարձրացումը չի օգնում Los Angeles-ին պատրաստվել այնպիսի խոշոր համաշխարհային միջոցառումներին, ինչպիսիք են Աշխարհի առաջնությունը և Օլիմպիական խաղերը: Այցելուների համար ավելի բարձր ծախսերը Los Angeles-ը պակաս գրավիչ են դարձնում ճանապարհորդների և համաժողովների անցկացման համար, հատկապես, երբ քաղաքը մրցակցում է բազմաթիվ մոտակա մատչելի ուղղությունների հետ:

TT առաջարկը խոչընդոտում է զբոսաշրջության և հյուրընկալության ոլորտում ապագա ներդրումները: Երբ նոր հյուրանոցներն ու շինությունները տեղափոխվում են քաղաքից դուրս, Los Angeles-ը կորցնում է շինարարական ոլորտում աշխատատեղեր, երկարաժամկետ զբաղվածություն և ապագա եկամուտների հոսքեր:

Կան քաղաքի ֆինանսները կայունացնելու ավելի լավ եղանակներ՝ առանց թուլացնելու Los Angeles-ի խոշորագույն մասնավոր հատվածի գործատուներից մեկին և ամենակարևոր տնտեսական շարժիչ ուժերից մեկին:

Պաշտպանեք աշխատատեղերը: Պաշտպանեք զբոսաշրջությունը: Պաշտպանեք մեր առաջին արձագանքողների ֆինանսավորման եկամուտները:

ՔՎԵՆՐԿԵՔ Ո՞՞ TT ԱՌԱՋԱՐԿԻՆ:

Այս էջում տպագրված փաստարկները հեղինակների կարծիքներն են, եւ դրանց ճշմարտացիությունը չի ստուգվում քաղաքային որեւէ կազմակերպության կողմից:

TT ԱՌԱՋԱՐԿԻ ԴԵՄ ՓԱՍՏԱՐԿԸ ԱՏՈՐԱԳՐՈՂ ԱՆՁԻՆՔ

JOHN S. LEE

Խորհրդի անդամ, շրջան 12

JACKIE FILLA

Նախագահ/գործադիր տնօրեն
Hotel Association of Los Angeles

ROBERT C. LAPSLEY

Նախագահ
California Business Roundtable

CHAD MAENDER

Նախագահ/գործադիր տնօրեն
LAX Coastal Chamber

RAY PATEL

Նախագահ
Northeast Los Angeles Hotel Owners Association

TRACY HERNANDEZ

Հիմնադիր գործադիր տնօրեն
Los Angeles County Business Federation

ՍՈՒՅՆ ՆԱԽԱԳԾԻ ՕԳՏԻՆ ՈՐԵՎԷ ՓԱՍՏԱՐԿ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ:

TT ԱՌԱՋԱՐԿԻ ԴԵՄ ՀԱԿԱԴԱՐՁ ՓԱՍՏԱՐԿ

TT առաջարկը բացասաբար է անդրադառնում Los Angeles-ի բոլոր բնակիչների վրա՝ առանց հաշվետվողականության:

Հյուրանոցները տրամադրում են անհրաժեշտ կացարան Los Angeles-ի արտակարգ իրավիճակների պատճառով տեղահանված վարձակալների, տարեցների, վարձակալության գործընթացի մեջ գտնվող աշխատողների, հարազատներին այցելող ընտանիքների և վառուչերային ծրագրերի միջոցով տեղավորված անօթևան բնակիչների համար: Հարկերի բարձրացումը մեծացնում է մատչելիությունը հենց այն բնակիչների համար, ովքեր ապավինում են այս հյուրանոցներին որպես մեր բնակարանային անվտանգության ցանցի մաս: TT առաջարկը վերաբերում է ոչ միայն զբոսաշրջիկներին, այլև Los Angeles-ի այն բնակիչներին, ովքեր ամբողջ տարին կախված են հյուրանոցներից:

TT առաջարկն այս հարկային եկամուտն ուղարկում է քաղաքի ընդհանուր ֆոնդ, ինչը նշանակում է, որ չկան երաշխիքներ՝ կապված նրա հետ, թե ինչպես կծախսվի գումարը: **TT առաջարկը հարկերի մշտական բարձրացում է՝ առանց հստակ հաշվետվողականության կամ նպատակային ֆինանսավորման:**

Հարկերը կրկին բարձրացնելուց առաջ Los Angeles-ը պետք է կենտրոնանա առկա ռեսուրսներն ավելի պատասխանատու կերպով կառավարելու վրա:

Քվեարկեք Ո՞ր TT առաջարկին:

TT ԱՌԱՋԱՐԿԻ ԴԵՄ ՀԱԿԱԴԱՐՁ ՓԱՍՏԱՐԿԸ ՍՏՈՐԱԳՐՈՂ ԱՆՁԻՆՔ

JOHN S. LEE

Խորհրդի անդամ, շրջան 12

Այս էջում տպագրված փաստարկները հեղինակների կարծիքներն են, եւ դրանց ճշմարտացիությունը չի ստուգվում քաղաքային որեւէ կազմակերպության կողմից:

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ _____

Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1.7 հոդվածի որոշ մասերի փոփոխման հրամանագիր՝ Los Angeles քաղաքի ժամանակավոր բնակության հարկը մինչև 16 տոկոս բարձրացնելու մինչև 2028 թվականը և դրանից հետո՝ 15 տոկոս, և պահանջելու առցանց տուրիստական գործակալություններից, ընկերություններից և հարթակներից հավաքագրել և փոխանցել հարկը հյուրանոցային սենյակի համար սահմանված բոլոր գանձումներից և վճարներից: (Տեղական օրենսգրքի լեզվի փոփոխությունները ներկայացված են ընդգծմամբ՝ ավելացված լեզվի համար և գծիկով՝ շեջված լեզվի համար:)

ՔԱՆԻ ՈՐ Los Angeles-ի տեղական օրենսգրքով սահմանվում է քաղաքի ժամանակավոր բնակության հարկը (Transient Occupancy Tax, TOT), որը հարկ է, որը վճարում է այն անձը, ով զբաղեցնում է սենյակ կամ տարածք հյուրանոցում՝ համաձայն TOT հրամանագրի,

ՔԱՆԻ ՈՐ քաղաքի ներկայիս TOT-ի մեջ ներառված հարկային դրույքաչափը սենյակի վճարի 14 տոկոս է,

ՔԱՆԻ ՈՐ այլ մոտակա քաղաքներում գանձվում է ավելի բարձր TOT դրույքաչափ, քան Los Angeles քաղաքում,

ՔԱՆԻ ՈՐ քաղաքի վարչական պաշտոնյան (CAO) հրապարակել է զեկույցներ, որոնցում նշվում է քաղաքի կողմից քաղաքի ֆինանսական կայունությունն ամրապնդելու և հիմնական ծառայությունները՝ ներառյալ փողոցների և մայթերի վերանորոգումը, արտակարգ իրավիճակներին արձագանքման ծառայությունները, հրդեհային պաշտպանությունը, այգիները և այգիների ծրագրավորումը, ինչպես նաև քաղաքային այլ ընդհանուր ծառայություններ պահպանելու անհրաժեշտությունը (տե՛ս հարիրդի թիվ 25-0029 թղթապատկանակը),

ՔԱՆԻ ՈՐ քաղաքը կանխատեսում է, որ Los Angeles-ի տարածքից դուրս այցելուների հոսք կայցելի քաղաք 2027 թվականի Սուպերբոուլի և 2028 թվականի Օլիմպիական և Պարաօլիմպիկ խաղերի համար, ինչը կբարձրացնի քաղաքի ծառայությունների պահանջարկը և կծանրաբեռնի քաղաքի ենթակառուցվածքները,

ՔԱՆԻ ՈՐ ընտրողների կողմից հաստատվելու դեպքում սույն նախագծով ժամանակավորապես կբարձրանա քաղաքի ներկայիս TOT դրույքաչափը 2 տոկոսով մինչև 2028 թվականը՝ տարածաշրջանի զբոսաշրջային տնտեսությունից եկամուտ ստանալու համար, որը, ինչպես սպասվում է, կավելանա 2027 թվականի Սուպերբոուլի և 2028 թվականի Օլիմպիական և Պարաօլիմպիկ խաղերի համար կանխատեսված այցելուների հոսքի շնորհիվ, և դրանից հետո կբարձրանա ներկայիս TOT դրույքաչափը 1 տոկոսով քաղաքի ընդհանուր գործառնական բյուջեն համալրելու և քաղաքի համար անհրաժեշտ ծառայությունները տրամադրելու համար լրացուցիչ եկամտի աղբյուր ապահովելու համար,

ՔԱՆԻ ՈՐ Ֆինանսների գրասենյակը հրապարակել է զեկույցներ, որոնցում վերլուծվում է TOT հավաքագրման սպասար, որն առաջանում է, երբ հյուրանոցային համարներն ամրագրվում են առցանց տուրիստական ընկերությունների միջոցով (տե՛ս հարիրդի թիվ 23-0318 և 24-1456 թղթապատկանները),

ՔԱՆԻ ՈՐ, ինչպես վերլուծվել է Ֆինանսների գրասենյակի զեկույցներում, առցանց տուրիստական ընկերությունների կողմից օգտագործվող բիզնես մոդելը, որի դեպքում առցանց տուրիստական ընկերությունը բանակցում է հյուրանոցային սենյակների գեղջված կամ մեծածախ գևի շուրջ, բայց այնուհետև սպառողից գանձում է ավելի բարձր գումար սենյակը զբաղեցնելու իրավունքի համար, հանգեցնում է սենյակների հետ կապված գանձումների, որոնք դուրս են գործող TOT-ի շրջանակներից,

ՔԱՆԻ ՈՐ CAO-ն հրապարակել է զեկույց, որում նշվում են քաղաքի ընդհանուր գործառնական բյուջեի համար ֆինանսական օգուտները՝ կապված TOT հավաքագրման այս բացը լրացնելու հետ, որն առաջանում է առցանց տուրիստական ընկերությունների կողմից

վճարվող մեծածախ կամ զեղչված գների և առցանց տուրիստական ընկերության միջոցով հյուրանոցային համարների համար վճարող՝ հյուրանոցի հյուրերի կողմից վճարվող գումարի միջև դրամական տարբերության պատճառով, և

ՔԱՆԻ ՈՐ սույն քվեաթերթիկի նախագիծը, եթե հաստատվի ընտրողների կողմից, կթարմացնի քաղաքի գործող TOT հրամանագիրը՝ լուծելու առցանց տուրիստական ընկերությունների բիզնես գործունեությունից բխող հավաքագրման պակասը:

ՀԵՏԵՎԱԲԱՐ

**LOS ANGELES ԶԱՂԱԹԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱԴՐՈՒՄ Ե ՀԵՏԵՎՅԱԼԸ.**

Բաժին 1: Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1.7 հոդվածի 21.7.2 բաժնի առաջին պարբերությունը փոփոխվում է հետևյալ կերպով.

Բացառությամբ այն դեպքերի, երբ համատեքստն այլ բան է պահանջում, սույն բաժնում տրված սահմանումները որոշում են սույն հոդվածի մեկնաբանությունը: Սահմանումները նախատեսված են լայնորեն մեկնաբանվելու՝ հօգուտ սույն հոդվածով նախատեսված հարկի սահմանման, գանձման և փոխանցման:

Բաժ. 2. Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1.7 հոդվածի 21.7.2 բաժնի (e) ենթաբաժինը փոփոխվում է հետևյալ կերպով.

(e) Վարձավճար: «Վարձավճար» նշանակում է հյուրանոցում տարածքի զբաղեցման համար գանձվող վճար, անկախ նրանից՝ ստացվել է այն թե չի ստացվել, և գնահատվում է փողով, անկախ նրանից՝ ստացվում է փողով, ապրանքներով, աշխատանքով կամ այլ կերպ՝ ներառյալ բոլոր մուտքերը, կանխիկ գումարները, հաշվանցումները, ցանկացած տեսակի կամ բնույթի գույքն ու ծառայությունները՝ առանց դրանցից պահումների: և ներառում է, առանց սահմանափակման, հետևյալը. Եյս սահմանման մեջ ոչինչ չպետք է մեկնաբանվի այնպես, որ հյուրանոցում տարածքի զբաղեցման համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն գանձվում է վարձավճար, երբ այդ տարածքն օպերատորի կողմից տրամադրվում է բնակչին որպես կոմպլիմենտ, և որևէ այլ անձից որևէ վճար չի գանձվում կամ չի ստացվում

1. զեղչված սեյակի վճարներ և աջակցման վճարներ,
2. գործարքի վճարներ, սպասարկման վճարներ, ամրագրման վճարներ, մշակման վճարներ, մանրածախ առևտրի հավելյալներ, միջնորդավճարներ, ամրագրման չեղարկման և հրաժարման վճարներ, ինչպես նաև California-ի զբոսաշրջային մարտեթևիզի գնահատումներ,
3. չվերադարձվող նախնական ամրագրման և այլ վարձակալության կանխավճարներ,
4. ապրանքների կամ ծառայությունների համար գանձվող վճարներ, ներառյալ, առանց սահմանափակման՝ կահույքի, սարքավորումների, կենցաղային տեխնիկայի, սպիտակեղենի, սրբիչների, մետաղադրամով չաշխատող սեյֆերի, սպա կամ մարզման կենտրոնների օգտագործման կամ մուտքի, հանգստավայրի օգտագործման կամ մուտքի (սովորաբար անվանում են հանգստավայրի կամ նպատակակետի վճարներ), ինտերնետի, հեռուստացույցի և հեռախոսի օգտագործման կամ մուտքի, սեյակների մաքրման, ընտանի կենդանիների տեղակայման, ընտանի կենդանիների վճարների կամ ընտանի կենդանիների հետ կապված մաքրման, լրացուցիչ/ժամանակավոր հյուրերի, և/կամ մասնակի օրերի, կամ վաղ կամ ուշ ժամանման կամ մեկնման համար վճարներ,

5. որևէ օպերատորի կողմից մրցանակային կամ պարզևատրման ծրագրից ստացված վճարը կամ արժեքը՝ ներառյալ մրցանակի կամ պարզևատրման միավորների, խրախուսանքների կամ բնուսների վարումը, և
6. ցանկացած այլ գանձում, որը ողջամտորեն վերագրվում է վարձավճարին, որը կազմում է ճանապարհորդական փաթեթի մաս:

Այս սահմանման մեջ ոչինչ չպետք է մեկնաբանվի այնպես, որ հյուրանոցում տարածքի զբաղեցման համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն գանձվում է վարձավճար, երբ այդ տարածքն օպերատորի կողմից տրամադրվում է բնակչին որպես կոմայիմենտ, և որևէ այլ անձից որևէ վճար չի գանձվում կամ չի ստացվում:

Բաժ. 3. Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1.7 հոդվածի 21.7.2 բաժնի (f) ենթաբաժինը փոփոխվում է հետևյալ կերպով.

(f) Օպերատոր: «Օպերատոր» նշանակում է գանկացած անձ, ով գլխավոր կամ երկրորդական օպերատոր է: Անձ, ով կա՛մ հյուրանոցի սեփականատեր է; կա՛մ որևէ այլ անձ, ով իրավունք ունի հյուրանոցում սենյակներ վարձակալելու՝ սեփականատիրոջ, վարձակալի, հիփոթեքային կրեդիտորի, լիցենզիա ստացողի կամ որևէ այլ կարգավիճակով: Հյուրանոցի շահագործման համար հիմնական պատասխանատվություն կրող սեփականատերը կամ տերը համարվում է գլխավոր օպերատոր: Եթե գլխավոր օպերատորը կատարում կամ հանձնարարում է իր գործառնոյթները, ամբողջությամբ կամ մասնակիորեն, կառավարող գործակալի; ամրագրման գործակալի, սենյակների վաճառողի կամ սենյակների վերավաճառողի կամ որևէ այլ գործակալի կամ պայմանագրային հիմունքով աշխատող անձի միջոցով՝ ներառյալ, առանց սահմանափակման, սույն օրենսգրքի 12.03 բաժնում սահմանված հյուրընկալման հարթակները, առցանց սենյակների վաճառողները; առցանց սենյակների վերավաճառողները և առցանց տուրիստական գործակալները՝ աշխատակցից բացի գանկացած տեսակի կամ բնույթի, այդ անձինք համարվում են երկրորդական օպերատորներ:

Երկրորդական օպերատորը համարվում է օպերատոր սույն հոդվածի նպատակների համար և ունի նույն պարտականություններն ու պարտավորությունները, ինչ գլխավոր օպերատորը՝ ներառյալ, առանց սահմանափակման, սույն հոդվածի դրույթների համաձայն՝ վճարման ենթակա հարկի ամբողջ գումարի հավաքագրումը և քաղաքին փոխանցումը: Երկրորդական օպերատորը կարող է կատարել իր պարտավորությունները սույն հոդվածի դրույթներով սահմանված կարգով՝ ներկայացնելով սույն հոդվածով նախատեսված հարկի ամբողջական գումարը՝ հաշվանցելով գանկացած այլ օպերատորին վճարված գանկացած հարկ՝ կամ անմիջապես ֆինանսների մասով տնօրենին, կամ գլխավոր օպերատորի միջոցով:

Սույն հոդվածի դրույթներին համապատասխանությունը գլխավոր կամ երկրորդական օպերատորի կողմից համարվում է համապատասխանություն երկուսի կողմից էլ, և սույն հոդվածի ոչ մի դրույթ չի պահանջում վճարել և/կամ փոխանցել որևէ գումար՝ բացի ժամանակավոր հյուրից գանձվելիք հարկի լրիվ գումարից:

Բաժ. 4. Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1.7 հոդվածի 21.7.2 բաժնում ավելացվում են (g)-ից մինչև (n) նոր ենթաբաժիններ՝ հետևյալ կերպով.

(g) Աջակցման վճար: «Աջակցման վճար» նշանակում է այն գումարը, որով սենյակի հայտարարված վճարը գերազանցում է գեռչված սենյակի վճարը՝ անկալության դեպքում:

(h) Միջնորդ: «Միջնորդ» նշանակում է գանկացած անձ, ով ուղղակիորեն կամ անուղղակիորեն (i) աջակցում է հյուրանոցում բնակության հաստատմանը

և (ii) գանձում, հավաքագրում կամ ստանում է վարձավճար այդ բնակության կապակցությամբ, որը կարող է ներառել, առանց սահմանափակման, աջակցման վճար: Միջևորդը ներառում է, առանց սահմանափակման, ճանապարհորդական կամ ամրագրման գործակալին, սույն օրենսգրքի 12.22 A.32 բաժնում սահմանված հյուրընկալման հարթակին, սենյակների վաճառողին կամ վերավաճառողին, առցանց սենյակների վաճառողին կամ վերավաճառողին, ինչպես նաև գանկացած տեսակի կամ բնույթի առցանց ճանապարհորդական գործակալին կամ բնկերությանը:

(i) Աջակցում է հյուրանոցում բնակության հաստատմանը: «Աջակցում է հյուրանոցում բնակության հաստատմանը» նշանակում է միջևորդել, համակարգել կամ այլ կերպ կազմակերպել (հաճախորդի) լայն հանրության կողմից հյուրանոցում համարներ գնելը, վաճառելը կամ բնակության իրավունքը:

(j) Չեղյված սենյակի վճար: «Չեղյված սենյակի վճար» նշանակում է օպերատորի կողմից երկրորդական օպերատորից գանձվող ընդհանուր գումարը հյուրանոցում վարձակալվող սենյակի համար:

(k) Սենյակի հայտարարված վճար: «Սենյակի հայտարարված վճար» նշանակում է միջևորդի կողմից ժամանակավոր հյուրից գանձվող ընդհանուր գումարը՝ ներառյալ վաճառքի հետ կապված ցանկացած վճար կամ գանձում՝ հարկերից առաջ:

(l) Ճանապարհորդական փաթեթ: «Ճանապարհորդական փաթեթ» նշանակում է տեղավորում, որի մեջ ներառվում է մեկ կամ մի քանի առանձին բաղադրիչ, ինչպիսիք են օդային տրանսպորտը, մեքենայի վարձույթը կամ նմանատիպ ծառայությունները, որը գանձվում է մեկ մանրածախ գնով:

(m) Երկրորդական օպերատոր: «Երկրորդական օպերատոր» նշանակում է ցանկացած անձ, ով հանդիսանում է կառավարող գործակալ, ամրագրման գործակալ, սենյակների վաճառող կամ սենյակների վերավաճառող, բրոքեր, միջևորդ կամ ցանկացած այլ գործակալ կամ պայմանագրային հիմունքով աշխատող անձ՝ այդ թվում, առանց սահմանափակման, սույն օրենսգրքի 12.22 A.32 բաժնում սահմանված հյուրընկալման հարթակը, առցանց սենյակների վաճառողը, առցանց սենյակների վերավաճառողը և առցանց տուրիստական գործակալը, ցանկացած տեսակի կամ բնույթի, ում գլխավոր օպերատորն ամբողջությամբ կամ մասնակիորեն հանձնարարում է իր որևէ գործառույթ՝ բացի աշխատակցից:

(n) Գլխավոր օպերատոր: «Գլխավոր օպերատոր» նշանակում է ցանկացած անձ, ով իրավունք ունի հյուրանոցում սենյակներ վարձակալել հյուրանոցի սեփականատիրոջ, վարձակալի, հիփոթեքային կրեդիտորի, լիցենզիա ստացողի կամ որևէ այլ կարգավիճակով, և ով հիմնական պատասխանատվություն է կրում հյուրանոցի շահագործման համար:

Բաժ. 5. Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1.7 հոդվածի 21.7.3 բաժինը փոփոխվում է հետևյալ կերպով.

ԲԱԺ. 21.7.3. ՍԱՀՄԱՆԱԾ ԸՆԴՀ:

Ցանկացած հյուրանոցում բնակվելու արտոնության համար յուրաքանչյուր ժամանակավոր հյուր ենթակա է և պարտավոր է վճարել հարկ 1964 թվականի օգոստոսի 1-ից կամ դրանից հետո մինչև 1967 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ օպերատորի կողմից գանձված վարձավճարի չորս տոկոսի (4%) չափով, և այդ ամսաթվից մինչև 1971 թվականի փետրվարի 28-ը ներառյալ՝ հինգ տոկոսի (5%) չափով, և այդ ամսաթվից մինչև 1978 թվականի հունիսի 30-ը ներառյալ վեց տոկոսի (6%) չափով, և այդ ամսաթվից մինչև 1983 թվականի հունիսի 30-ը ներառյալ յոթ ու կես տոկոսի (7.5%) չափով, և այդ ամսաթվից մինչև 1985 թվականի դեկտեմբերի

31-ը ներառյալ տասը տոկոսի (10%) չափով, և այդ ամսաթվից մինչև 1987 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ տասնմեկ տոկոսի (11%) չափով, և այդ ամսաթվից մինչև 1990 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ տասներկու տոկոսի (12%) չափով, և այդ ամսաթվից մինչև 1993 թվականի հուլիսի 31-ը ներառյալ տասներկու ու կես տոկոսի (12.5%) չափով, և դրանից հետո տասնչորս տոկոսի (14%) չափով: 2028 թվականի դեկտեմբերի 31-ին կամ դրանից առաջ տարածքների օգտագործման համար օպերատորի կողմից գանձվող վարձավճարի տասնվեց տոկոսի (16%) չափով, և 2029 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո տարածքների օգտագործման համար օպերատորի կողմից գանձվող վարձավճարի տասնհինգ տոկոսի (15%) չափով: Նշված հարկը կազմում է ժամանակավոր հյուրի պարտքը քաղաքին, որը մարվում է օպերատորին կամ քաղաքին վճարում կատարելով: Հյուրանոցի ժամանակավոր հյուրը պարտավոր է հարկը վճարել հյուրանոցի օպերատորին վարձավճարը վճարելու պահին: Եթե կատարվում է վարձավճարի մաս-մաս վճարում, կամ եթե վճարված գումարը պակաս է վճարման պահին կուտակված վարձավճարի և հարկի լրիվ գումարից, ապա հարկի համամասնական մասը համարվում է վճարված յուրաքանչյուր նման վճարման կամ մաս-մաս վճարման հետ միասին: Չվճարված հարկը պետք է վճարվի, երբ ժամանակավոր հյուրը դադարի հյուրանոցում տեղ զբաղեցնել: Եթե որևէ պատճառով հարկը չի վճարվում հյուրանոցի օպերատորին, ֆինանսների մասով տնօրենը կարող է պահանջել, որ այդ հարկը վճարվի անմիջապես քաղաքին:

Բաժ. 6. Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1.7 հոդվածի 21.7.5 բաժինը փոփոխվում է հետևյալ կերպով.

ԲԱԺ. 21.7.5. ՕՊԵՐԱՏՈՐ ԴԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Յուրաքանչյուր օպերատոր հավաքագրում է սույն հոդվածով սահմանված հարկը նույն չափով և նույն ժամանակ, ինչ վարձավճարը հավաքագրվում է ամեն ժամանակավոր հյուրից: Հարկի գումարը նշվում է գանձվող վարձավճարի գումարից առանձին, և յուրաքանչյուր ժամանակավոր հյուր օպերատորից պետք է ստանա վճարման կտրոն: ~~Հյուրանոցի~~ որևէ օպերատոր չպետք է գովազդի կամ որևէ կերպ հայտարարի, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, որ հարկը կամ դրա որևէ մաս կտանձնի կամ կծածկի նման օպերատորը, կամ որ այն չի ավելացվի վարձավճարին, կամ որ ավելացման դեպքում դրա որևէ մաս կփոխհատուցվի՝ բացառությամբ սույնում նշված դեպքերի: Երկրորդական օպերատորը կարող է կատարել իր պարտավորությունները սույն հոդվածի ~~ըրույթներով~~ սահմանված կարգով՝ ներկայացնելով սույն հոդվածով նախատեսված հարկի ամբողջական գումարը՝ հաշվանցելով համապատասխան օպերատորին վճարված ցանկացած հարկ՝ կամ անմիջապես ֆինանսների մասով տնօրենին, կամ այդ համապատասխան այլ օպերատորի միջոցով: Սույն հոդվածի ըրույթներին համապատասխանությունը գլխավոր կամ երկրորդական օպերատորի կողմից համարվում է համապատասխանություն երկուսի կողմից էլ՝ կիրառելի հարկային պարտավորության առկայությամբ, և սույն հոդվածի ոչ մի ըրույթ չի պահանջում վճարել և/կամ փոխանցել որևէ գումար՝ բացի ժամանակավոր հյուրից գանձվելիք հարկի լրիվ գումարից:

Բաժ. 7. Los Angeles-ի տեղական օրենսգրքի II գլխի 1.7 հոդվածի 21.7.7 բաժնի առաջին պարբերությունը փոփոխվում է հետևյալ կերպով.

~~Յուրաքանչյուր Օպերատորը~~ յուրաքանչյուր օրացուցային ամսվա 25-րդ օրը կամ դրանից առաջ ֆինանսների մասով տնօրենին ներկայացնում է հաշվետվություն գանձված և ստացված ընդհանուր վարձավճարների, ինչպես նաև նախորդ օրացուցային ամսվա ընթացքում ժամանակավոր հյուրերի համար հավաքագրված հարկի գումարի վերաբերյալ ներառյալ նախորդ օրացուցային ամսվա համար յուրաքանչյուր երկրորդական օպերատորից ստացված վարձավճարի գումարի

մասին հաշվետվություն՝ կիրառելի չափով: Հաշվետվության ներկայացման պահին հավաքագրված հարկի և չհավաքագրված, բայց հավաքագրման ենթակա հարկի ամբողջ գումարը փոխանցվում է ֆինանսների մասով տնօրենին: Բացառությամբ 21.7.8 բաժնում նշված դեպքերի՝ օպերատորը պարտավոր չէ ֆինանսների մասով տնօրենին փոխանցել ցանկացած հարկի գումար, որը չի հավաքագրվել և չպետք է հավաքագրվի ժամանակավոր հյուրից: Սույն հոդվածի համաձայն՝ օպերատորների կողմից հավաքագրված և հավաքագրման ենթակա բոլոր հարկերը մինչև քաղաքին փոխանցվելը պահվում են վստահված կառավարման մեջ՝ ի շահ քաղաքի: Սույն հոդվածի համաձայն՝ վճարման ենթակա հարկի ամբողջ գումարը, անկախ նրանից՝ հավաքագրվել էր, թե ենթակա էր վճարման, բայց չէր հավաքագրվել, համարվում է օպերատորի կողմից քաղաքին պարտք և պետք է մարվի միայն քաղաքին վճարելուց հետո:

Բաժ. 8. Ներկայացում ընտրողներին: Սույն հրամանագիրը ներկայացվում է քաղաքի ընտրողներին: Եթե հրամանագիրը հաստատվի քվեների մեծամասնությամբ, այն ուժի մեջ կմտնի, և սույնում նշված կիրառելի բաժինները հետագայում կհամարվեն Los Angeles-ի տեղական օրենսգրքի մաս:

Բաժ. 9. Փոփոխություններ: Խորհուրդը կարող է փոփոխել սույն հրամանագրի ցանկացած դրույթ, սակայն ցանկացած փոփոխություն, որը կհանգեցնի հարկի սահմանմանը, երկարաձգմանը կամ ավելացմանը, կպահանջի ընտրողների հաստատումը:

Բաժ. 10. Բաժանելիություն: Եթե սույն հրամանագրի ցանկացած բաժին, ենթաբաժին, կետ, նախադասություն, արտահայտություն կամ կիրառում կամ դրա որևէ մաս ճանաչվի հակասահմանադրական կամ անվավեր ցանկացած իրավասության դատարանի կամ տրիբունալի կողմից, հրամանագրի մնացած բաժինները, ենթաբաժինները, կետերը, նախադասությունները, արտահայտությունները, մասերը կամ կիրառությունները կմնան լիովին ուժի և գործողության մեջ, և այդ նպատակով սույն հրամանագրի դրույթները բաժանելի են: Բացի այդ, ընտրողները հայտարարում են, որ իրենք կընդունեն սույն հրամանագրի բոլոր բաժինները, ենթաբաժինները, կետերը, նախադասությունները, արտահայտությունները, մասերը և կիրառությունները՝ բացառությամբ այն բաժնի, ենթաբաժնի, կետի, նախադասության, արտահայտության, մասի կամ կիրառության, որը ճանաչվել է հակասահմանադրական կամ անվավեր:

Բաժ. 11. Սույն նախագիծը քաղաքային խորհրդի և ընտրողների կողմից նախատեսված է որպես փոխլրացում և հավելում միայն քաղաքային խորհրդի կողմից ընտրողներին ներկայացված ժամանակավոր բնակության հարկն առցանց ճանապարհորդական ընկերությունների և հարթակների նկատմամբ կիրառելու վերաբերյալ քվեաթերթիկի նախագծին, որը պետք է ներառվի սույն նախագծի հետ սույն քվեաթերթիկում: Եթե երկու օրենսդրական նախագիծն էլ ստանա ընտրողների մեծամասնության հաստատումը, նախագծերի դրույթները կհամարվեն միմյանց փոխլրացնող և հավելյալ, ինչպես նաև իրար չհակասող, և երկու նախագծի բոլոր դրույթները կընդունվեն և կլինեն վավերական:


Ընտրողների Իրավունքների Նախագիծը

ԴՈՒՔ ՈՒՆԵՔ ՀԵՏԵՎՅԱԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

- 1. Զվեարկելու իրավունք, եթե դուք գրանցված ընտրող եք:** Դուք թվարկվելու իրավունք ունեք, եթե
 - ★ Կալիֆորնիայում ապրող ԱՄՆ քաղաքացի եք
 - ★ առնվազն 18 տարեկան եք
 - ★ գրանցված եք այնտեղ, որտեղ ներկայումս ապրում եք
 - ★ Ներկայումս քրեական հանցանքի համար նահանգային կամ ֆեդերալ մակարդակով դատապարտված չեք ազատագրվման և
 - ★ Ներկայումս դատարանի կողմից թվարկման համար ճանաչված չեք անգործունակ
- 2. Զվեի իրավունքը, եթե դուք գրանցված ընտրող եք, նույնիսկ եթե Ձեր անունը չկա ցուցակում:**
Դուք թվարկվելու եք պայմանական թվաթերթիկով: Ձեր թվն հաշվի կառնվի, եթե ընտրական հանձնաժողովի անդամները որոշեն, որ Դուք թվարկվելու իրավունք ունեք:
- 3. Զվեի իրավունքը, եթե ընտրատեղամասերը փակվելիս Դուք դեռ հերթի մեջ եք:**
- 4. Գաղտնի թվարկության իրավունք՝** առանց Ձեզ որևէ մեկի անհանգստացնելու կամ ասելու, թե ինչպես թվարկեք:
- 5. Նոր թվաթերթիկ ստանալու իրավունքը,** եթե Դուք, դեռևս չթվարկված, սխալ եք թույլ տվել: Դուք կարող եք՝
Ընտրատեղամասում ընտրական հանձնաժողովի անդամին խնդրել՝ ստանալու նոր թվաթերթիկ
Փոխարինեք Ձեր հեռակա թվարկման թվաթերթիկը նորով ընտրական բյուրոյում կամ Ձեր ընտրատեղամասում կամ
Թվարկեք պայմանական թվաթերթիկով:
- 6. Թվարկության ժամանակ** ցանկացածից օգնություն ստանալու իրավունքը՝ բացառությամբ ձեր գործատուի կամ արհմիության ներկայացուցչի:
- 7. Կալիֆորնիայի ցանկացած ընտրական տեղամասում հեռակա թվարկման Ձեր լրացրած թվաթերթիկից իրաժարվելու իրավունքը:**
- 8. Այլ լեզվով ընտրական նյութեր ստանալու իրավունքը,** եթե Ձեր թվարկության տեղամասում շատերը խոսում են այդ լեզվով:
- 9. Ընտրական հանձնաժողովի անդամներին ընտրությունների ընթացակարգերի վերաբերյալ հարցեր ուղղելու և ընտրությունների ընթացքը դիտելու իրավունքը:** Եթե այն անձը, ում Դուք հարց եք ուղղել, չի կարող պատասխանել Ձեր հարցին, նա պետք է Ձեզ ուղարկի այն անձի մոտ, ով կարող է պատասխանել Ձեր հարցին: Ձեր կողմից ճշշում գործադրելու դեպքում նրանք կարող են Ձեզ չպատասխանել:
- 10. Ցանկացած անօրինական կամ կեղծ ընտրական գործունեության վերաբերյալ զեկուցելու իրավունքը** ընտրական հանձնաժողովի անդամին կամ նահանգային բյուրոյի քարտուղարին:

Եթե կարծում եք, որ նշված որևէ իրավունք ոտնահարվել է, զանգահարեք նահանգային ընտրողների հարցերով քարտուղարի գաղտնի անվճար թեժ գիծ (800) 345-VOTE (8683) հեռախոսահամարով:

 www.sos.ca.gov կայքում

 **(800) 345-VOTE (8683)**
հեռախոսահամարով

 elections@sos.ca.gov էլ փոստով

Ընտրողների մատչելիության տեղեկատվություն



Մատչելիություն և այլ օժանդակ սարքավորումներ (800) 815-2666, տարբերակ 4 (LA վարչաշրջանի թեժ գիծ)

LA վարչաշրջանի քվեարկության կենտրոններն ապահովում են հաշմանդամի սայլակների համար մատչելիություն և/կամ մայթեզրի քվեարկություն: Քվեարկության կենտրոնի ներսում դուք կարող եք գտնել սարքեր, որոնք կօգնեն ձեզ քվեարկել:



Աուդիո ձայնագրություններ (213) 978-0444

Աուդիո սարքավորումները հասանելի են ձեր քվեարկության կենտրոններում ձեզ օգնելու համար:

Այս գրքուկում ներառված օրենսդրական նախագծերի աուդիո ձայնագրությունները հասանելի են անգլերենով, հայերենով, չինարենով, ֆարսիով, հինդիով, ճապոներենով, քմերերենով, կորեերենով, ռուսերենով, իսպաներենով, տագալերենով, թայերենով և վիետնամերենով: Այս ձայնագրությունները հասանելի են մեր կայքում clerk.lacity.gov/elections/multilingual-services և հետևյալ գտնվելու վայրերում՝

Braille Institute Library
741 North Vermont Avenue
Los Angeles, CA 90029
(323) 660-3880

Central Library
630 West 5th Street
Los Angeles, CA 90071
(213) 228-7000

Քվեարկողները կարող են նաև պահանջել աուդիո ձայնագրությունների պատճենը մեր գրասենյակից.

Office of the City Clerk-Election Division
Attn: Audio Recordings
555 Ramirez Street, Space 300
Los Angeles, CA 90012



TTD հեռախոսահամար (562) 462-2259

Տողության խանգարումներ ունեցողների համար տրամադրվում է TTD հեռախոսահամար:



Լեզվական աջակցություն (213) 978-0444

Քաղաքապետարանը նաև տրամադրում է քվեարկության նյութեր հայերեն, չինարեն, ֆարսի, հինդի, ճապոներեն, քմերերեն, կորեերեն, ռուսերեն, իսպաներեն, տագալերեն, թայերեն և վիետնամերեն լեզուներով:

Ձեր քվեարկության ընտրանքները



ՔՎԵԱՐԿՈՒՄ ՓՈՍՏՈՎ

- Վերադարձը՝ փոստով
 - Պետք է փոստային դրոշմանիշ ունենա մինչև ընտրության օրը և ստացվի 7 օրվա ընթացքում
- Թողնելը
 - Զվեատուփի վայրում
 - Վարչաշրջանի LA քվեարկության կենտրոնում

Հիշեք, որ անհրաժեշտ է ՍՏՈՐԱԳՐԵԼ ձեր փոստով քվեարկման ծրարի հետևի մասում:



ՔՎԵԱՐԿՈՒՄ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ

- Զվեարկեք անձամբ
- Թողեք Ձեր փոստով քվեարկելու քվեաթերթիկը



ՍԿԱՆԱՎՈՐԵՔ՝ ԳՏՆԵԼՈՒ ՀԱՍԱՐ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԺԱՄԵՐԸ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԸ կամ այցելեք locator.lavote.gov/locations/vc

ՍԿԱՆԱՎՈՐԵՔ
ԿՑՏԵՂ:

**Վաղ քվեարկե՛ք:
Քվեարկության կենտրոնները բացվում են
2026 թվականի մայիսի 23-ին.**